

„Droschak“

ORGANE

de la Fédération

Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:

RÉDACTION DU JOURNAL

„Droschak“

GENÈVE (Suisse)

LIBRARY
A. P. F. BUREAU

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԵՐ

ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

I

Դեռ ապրում ենք աղէտի կօշմարի տակ: Պանատիկոսութեան ժայթքումը մէկ հարւած էր, հակահայկական ամբաստանութիւնները — մի այլ հարւած՝ ոչ նւազ ահաւոր ու շշմեցուցիչ:

Երկրորդ հարւածի սոսկումները մեղմանում են — այդ էլ սփոփանք է: Փոքր ինչ ուշ — բայց ամենքը համողում են, որ հայերին մեղադրել հայակործան դաւերի մէջ՝ առնւազը անհնարին է: Իսկ մինիստր Զավիթ բէյի տեսակցութիւնը „Ազատամարտի“ մի աշխատակցի հետ պարզեց, թէ ինչ են մտածում այդ շարագործ շշուկների առթիւ կառավարական իրազեկ շրջաններում:

Ո՞վ էր, որ հրապարակ նետեց այդ անանուն՝ ամբաստանութիւնը:

— Մի կողմից Ադիլ բէյի պէս տխրահռչակ բիւրօկրտանները, միւս կողմից արեւմտեան բուրժուազիայի անարգ, ծախու օրգանները:

Ամենից կսկծալին այդ մամուլի բռնած դիրքն էր — թէկուզ և անարգ, բուրժուական մամուլի: Հասարակական կարծիքը հաւատում էր: Նա հաւատում էր „Բերդիներ Տագեբլատի“ պէս թերթերի խղճավաճառ թղթակիցներին, որոնք արիւնաներկ ու յօշոտւած Վիլիկիայի հանդէպ ապշեցուցիչ ցինիկութեամբ յօրինում էին իրենց անլուր մեղադրանքները հայութեան դէմ, հայ երիտասարդութեան ու „անկախ Հայաստանի“ երեւակայական ձգտումների դէմ:

Հասարակական կարծիքը հաւատում էր և միանգամայն չ'արդարացնելով հանդերձ կատարւած գազանութիւնները, փաստաբանում էր „մեղմացուցիչ հանդամանքներ“... Չարդարար պաշտօնէութեան զօրքի ու խուժանի նկատմամբ:

Նոր թղթակիցներ եկան, սակայն, նոր օրգաններ խօսեցին — շիտակ, անկաշառ մամուլի օրգանները: Եւ հանրային կարծիքի մէջ սկսեց բարերար, նպաստաւոր շրջումն: Էլ ոչ մի խօսք հայ տարրի „յարձակողական տենչերի“ մասին: Իրողութիւնները լուսաբանւեցին:

Իրենց հարազատ լոյսի տակ: Ողբերգութեան պարագաներն ու հերոսները պատկերացան իրենց հարազատ գոյներով: Ընդհանուր ու կենտրոնական միտքը, որ շեշտեց բոլոր այդ շիտակ օրգաններում — միևնոյնն է. աւանդական հակամարտութիւն մահաբերականի ու քրիստոնիայի, մասնաւորապէս հայի միջև. աւանդական համոզում առաջինի մէջ՝ որ բոլոր „րէֆորմների“, յեղափոխութիւնների, բոլոր „եւրոպական“ նորմուծութիւնների բուն դրդիչը, հոգին — հայն է... Այդտեղից և — բէկեցիլի մոլեգնութիւն ու հակահայկական պօգրօմներ... Դա մի էական պատճառը ի շարս այլ պատճառների:

Պարզեց այդպիսով միանգամ ընդմիշտ և բոլորի համար, որ Վիլիկեան եղեւնը — թէ անգամ նա չի ունեցել իբրև ղեկավար՝ գահավիժող դեսպոտի ձեռքը — իրօք „վանդէական“ մի թուիչք էր, հակայեղափոխական մի ժայթքում:

Եւ սակայն, աւա՞ղ, մի բան մնում է եւրոպական լաւ մամուլի մեկնութիւնների մէջ, մի բան, որ խորապէս վշտացնում է մեզ... Մեղադրանքի մի զօրեղ շեշտ, յանդիմանութեան ու բարեկամական յորդորների մի տարափ — Վիլիկիոյ հայ գործող երիտասարդութեան, կամ աւելի լաւ է ասել հայ ճչան երիտասարդութեան հասցէին: Չը զարմանանք և չը լանք, այլ աշխատենք հասկանալ, քննադատել և ուղղել:

Չեն մեղադրում հայ երիտասարդութիւնը „անկախութեան“ ու պրօֆօկատօրական ձգտումների համար, չեն ասում, թէ նա եղել է դրդիչ, պատճառ կամ թէ մէկը պատճառներից զարհուրելի ողբերգութեան: Ոչ „Բերդիներ Տագեբլատի“ և Ադիլ բէյերի ինսիտուացիան յաղթահարւած են վերջնականապէս, նոյն իսկ Բենիչ Յանձնաժողովի անագան մերկացումներով:

Մեղադրում են հայ երիտասարդութիւնը անգիտակից անմտած ժեստերի համար, վայրիվերոյ յափշտակութիւնների, ցոյցերի ու bravadesների համար:

„Հայերը պատճառ չեն եղել — դա դուրս է տարակուսանքից. բայց հայ երիտասարդութիւնը փոքր ինչ աւելի հեռու է գնացել իր սահմանադրական համակրանքների ցուցադրութեան մէջ, փոքր ինչ անզուսպ թափ է հաղորդել իր ազատապաշտ խանդավառու-

Թեան... Թատրոնական աղվարայր ներկայացումներ, Թագաւորների, հին փառքերի ջատագովումներ, ազգային դրօշակների ու այլ էմբլեմների Թափահարում, շովինիստական մի կատարեալ արւեցութիւն... Այդ հանգամանքը աւելի ևս զարկ է տւել մահմեդական տգէտ ամբօխի հայատեաց ու յետագէմ տրամադրութեան, նրա դարաւոր համոզումին՝ որ հայը իր ոսոխն է, որ սահմանագրական շարժումներն էլ նրա սագրանքն են, որ նա ձգտում է անկախութեան, տիրապետութեան, որ այդ տիրապետութեան հետեանքը պիտի լինի մահմեդականների «ստրկացումը» և այլն:

Այս և նման պատճառաբանութիւններ մենք հանդիպում էինք արեւմտեան մամուլի օրգաններում, լսում էինք և աղէտներին ակնատես հայասէր եւրոպացիներից, հրապարակական ատենախօսութիւնների միջոցին:

Ուշագրութեան արժանի են «Frankfurter Zeitung»-ի մեկնութիւնները, — մի թերթի՝ որի իւրաքանչիւր հաղորդագրութիւնը պատկառանքով է կարդացւում ամբողջ լուսաւոր աշխարհում և որ 20 տարուց ի վեր, իբրև մէկը սակաւաթիւ համաշխարհային օրգաններից, պաշտպանել է ամեն առթիւ թիւրքաց Հայաստանի ինքնօրինութեան, աւտօնօմիայի խնդիրը երեք խոշոր թղթակցութիւններից բաղկացած մի ընդարձակ ու յուզիչ տեսութիւն՝ «Սարսափի օրերը Ադանայում» խորագրով: Ուշագիր ու վարպետ հետազօտողի մի մանրազնին վերլուծում. դրա հետ՝ անկեղծ ու կարեկցող սրտի բուռն ցասումներ և բողբոջի հզօր շեշտեր... դահիճների դէմ:

Բայց այդ բոլորի հետ կարգում էք՝ «Հայերը անզգուշութիւններ գործեցին, որոնք կարող էին գրգռել մահմեդականներին»...

Եւ դարձեալ յիշատակում են կրուբային գործունէութեան մանրամասները, պատմական ողբերգութիւնների դէմօնստրատիվ ներկայացումները, անմիտ ու սղայական «կեցցէ՛ Հայաստան» ներքը...

«Բնականաբար, ազգային շովինիզմի այդ վերազարթնումը, շուտով յայտնի եղաւ իշխանութիւններին, և մինչդեռ հայերը զբաղած էին իրենց մեծամիտ ու սնապարծ ցոյցերով, մինչդեռ նրանք ազատ ասպարէզ էին տալիս իրենց լեզուներին ու զգացումներին — թիւրք լրտեսները մութի մէջ դիտում էին նրանց շարժումները»...

Եւ «Fr. Zeit» մատնելով հանդերձ բուն պատճառները, խարանելով հանդերձ իսկական դահիճներին, ցաւ է յայտնում հայոց սանձարձակ ցոյցերի առթիւ, որոնք թերևս պատրւական երից մէկն են եղել այդ դահիճների ձեռքում:

Վրիպումներ, չափազանցութիւններ կան, անշուշտ, նաև այդ շիտակ մամուլի առաջադրած փաստերի ու մեկնութիւնների մէջ: Բայց կայ և ճշմարտութեան

բաժինը, որ հաստատոււմ է նոյնիսկ հարազատ աղբիւրներից:

Գա մի ծանր ու ցաւեցնող մեղադրանք է, որի վրայ պէտք է անդրադառնալ լրջօրէն ու պաղարիւնութեամբ, առանց ոստոսելու, բայց և առանց մեծամտօրէն արհամարհելու: Այդտեղ գուցէ թաղնւած է հայ երիտասարդութեան մի յայտնի մասի բնորոշ ու վտանգաւոր գծերից մինը: Ինքնախարազանումը անպատեհ չէ նոյնիսկ ներկայ օրերի մէջ, կատարւած սոսկումներից յետոյ և կատարելիք, նոր հնարաւոր պատահականութեանց հանդէպ: Եթէ մեր ժողովուրդը, ամբողջ թիւրքահայ ժողովուրդը, իր զանգւածային ընդհանրութեան մէջ խորապէս պախարակելի է՝ ինքնապաշտպանութեան պահանջների հանդէպ բռնած իր պաղ, անտարբեր դիրքով, ապա մեր գործօն երիտասարդութիւնը ևս, լինելով հանդերձ այդ ժողովրդի աղն ու հոգին, նրան հրահրող ու ղեկավարող մեծ աղբակը, տողորւած լինելով գործելու անզուսպ ծարաւով, թերևս պակաս չի մեղանշում իր մի քանի ծայրայեղութիւններով, որոնք արդիւնք են յեղափոխական ու բաղաքսցիական պակասաւոր դաստիարակութեան:

Տարակոյս չը կայ, որ թիւրքահայ երիտասարդութեան մէջ, երկար ժամանակից ի վեր մշակւել է շովինիզմի նեղ, տարամբժ ազգայնամոլութեան թունաւոր ծաղիկը: Կարելի է բացատրել երեւոյթը, կարելի է նոյնիսկ որոշ չափով արդարացնել... Աշխարհիս ո՞ր ազգն է այնքան ոտնահարւել, ո՞ր ժողովուրդն է այնքան ցինիկօրէն յօշոտւել ու անարգւել, ինչպէս հայութիւնը: Արդ՝ տիեզերական ընդհանուր օրէնք է որքան ուժեղ է գործողութիւնը (action), այնքան ուժեղ է և հակազգեցողութիւնը (reaction): Եւ զարմանալի չէ, որ հայ երիտասարդութեան մի յայտնի մասը հակազգում է փոքր ինչ ծայրայեղ, հիւանդոտ ձևով այդ դարաւոր հայածականութեան դէմ, զարմանալի չէ, որ 600 տարւայ ազգային խաւար ու ոճրալի գիշերից յետոյ յանկարծակի լոյս աշխարհ գալով, հայ ժողովուրդը, ի դէմս իր երիտասարդ տարրերի, արտագրում է տեղ-տեղ յախուռն շարժումներ, որ հայ երիտասարդութիւնը, յանձին իր խակ ու տաքարիւն ուսմանների փարում է ըմբոստ ազգայնամոլութեան դրօշակին, նետոււմ է մուլեգնոտ ցոյցերի մէջ, զառանցում է «անցեալի» մասին և դուրս է կոչում մուսցութեան անդունդները — անգիտակցաբար, առանց յետին մտքերի — «հին փառքերի» ուրակականները...

Հոգեբանօրէն միանգամայն հասկանալի՝ այդ իրողութիւնները, սակայն, տակտի ու ազգամիջեան համբաշխութեան տեսակէտից, միանգամայն վնասակար են ու դատապարտելի:

կան և անուղղայ ամբարտաւաններ, որոնք սիրում են պարծենալ ազգային «առաջնութեան» ու «բարձրութեան» պատրանքներով և հրապարակօրէն ու դէմօնատրատիվ ցուցադրում են իրենց արհամարհոտ «գերազանցութիւնը» հանդէպ «ստորին, վայրենաբարոյ ցեղերի»...

Դա շօյլինիզմի տրամաբանական արգասիքն է, որ թունաւորում է բոլոր—անգամ առաջագէտ—երկրորդական մթնոլորտը:

Պէտք է վերջ դնել այդ տխմար ու վտանգաւոր մտավիճակին:

Դեռ Կիլիկիոյ աղէտից առաջ, Սահմանադրութեան ծանուցումից ի վեր, արտասահմանեան մի կարգ հայ հրատարակութիւններ տալիս էին այդ ողբալի հոգեբանութեան նմուշները: Իսկ այժմ, աղէտից յետոյ, այլ ևս սանձ չը կայ լեզուներին: Թիւրք ժողովրդի հասցէին չպրտւում են բոլոր երևակայելի անկանանքը, որոնց մէջ «շուն», «վայրենի» բառերը խստերից չեն:

«Թուռցիկները» եկան լրացնելու պակասը: Արտասահմանեան տաքուկ տեղերում բազմած, ոչ մի ուժ ու հեղինակութիւն չունեցող խմբեր, գուցէ նոյնիսկ մի մի անհատներ, պարտք համարեցին իրենց «ձայնը հնչեցնելու» համազգային աղէտի առթիւ և դարձեալ տղա-յամիտ յիշոցներ ու խրոխտանքներ դրացու հասցէին, «ազմի» փրօւն ու ճոռոմ հրաւերներ, հիւանդագին ժեստեր, սանտիմենտալ վայնասուն...

Արէժի ու ատելութեան անուժ թափահարումներ... Ազդուց, դժբախտաբար, հայ երիտասարդութեան մի յայտնի մասը սովորել է որակի պակասը լրացնել քանակով, գործի պակասը—ճիշտ ու աղմուկով...

Գատարկամիտ խրոխտանքներով աղմուկում են մթնոլորտը և երևակայում են, թէ գործ են կատարում: Արէժինդիր ու սպանական հարայ-հրոցով հովացնում են իրենց սիրտը, մոռանալով, որ իրականութիւնը մի նշանակեց անգամ չի փոխւում դրանից, որ ներսի ժողովուրդն է միայն տուժում այդ վայրիվերոյ ու սանձարձակ կռնչիւններից: Ոչ ոքի աչքից, արդարև, չեն վրիպում այդ հրատարակութիւնները...

Այդպէս—աղէտից առաջ և այդպէս—աղէտից յետոյ: Այդպէս—արտասահմանում և այդպէս—հայրենիքում: Եւ ահա, չը նայած հայ ժողովրդի, հայ մտաւորականութեան լոյսալ ու շիտակ գործելակերպին, չը նայած ընդհանուր բացակայութեան յարձակողական տենչանքների, «անկախ Հայաստանի» ու նման սին երազանքների—մենք մերթ ընդ մերթ թողնում ենք արտասահմանի և գուցէ նաև մեր անմիջական շրջապատի վրայ անհետեւ տպաւորութիւնը թէ իբր հայկական հայրենասիրութիւնը անվերածելիօրէն ըմբոստ է:

Թէ իբր նա անհաշտօրէն յարձակողական է և անջատական... ուղղաձ կայսրութեան ամբողջութեան դէմ: Հայ երիտասարդութեան մի մասնիկն է միայն վարակած այդ օտարատեսաց շօյլինիզմի թոյնով—բայց դա էլ արդէն մտատանջող է:

Ժամանակ է խղել այդ ճշան ու ըէկլամամու ազգասիրութեան հետ, որ յաճախ արգիւնք է սեփական ուժերի գեր-գնահատման, չափազանցման: Ընդմիջութաղելու է և հին «փառքերի» էմբլեմները, որոնք ժամանակակից գնահատութեան չափերի տեսակէտից թէական են ու արգահատելի: Այդ անհրապոյր ու վնասակար պատրանքների տեղ պէտք է իշխէ հայ բովանդակ երիտասարդութեան մէջ առողջ ազգային ինքնասիրութիւնը, որ ոչինչ չունի իր մէջ գրգռիչ ու յարձակողական, որ ուզում է շեշտել—ինչպէս ամեն մի ուրիշ ազգային ինքնասիրութիւն—ուզում է ինքզինքը պաշտպանել և ապահովել, միանգամայն յարգելով հանդերձ դրացի ազգերի իրաւունքներն ու զգացումները:

Չը պէտք է չափազանցնել և մեր «ազգային» բարձրութիւնն ու գերազանցութիւնը, Համեստ լինելու մենք ևս շատ պատճառներ ունինք: Այդ «բարձրութիւնը» յարաբերական է և այն էլ միայն... մեր միջավայրի համեմատութեամբ: Այդ միջավայրից փոքր ինչ աւելի բարձր լինելը դեռ հիմք չի տալիս պարծենալու, ազգային հպարտութեան թմբուկ գարնելու... Ինչ ենք մենք այդ յարաբերութիւնից դուրս, Ինչ են ներկայացնում մեր ժողովրդային զանգածները Վասպուրականի ու Տարօնի լեռ ու ձորերում... Մի խաւար ու գրեթէ միջնադարեան գոյութիւն, որի ծոցում տգիտութիւնն ու նախապաշարմունքը դեռ ամուր շեշտում են իրենց իրաւունքները: Մի միջնադարեան գոյութիւն, որ երբեմն—տարւելով նոյնքան խաւար ու գուհիկ ցեցերի ինտրիգներով—բիչ է մնում Վինչի դատին ենթարկէ ժամանակակից հարցերի մասին ատենաբանող գործիչներին...

Համեստ լինելու պատճառներ ունինք: Մեր ազգային էութիւնը իր հրապուրիչ կողմերի հետ ունի և իր խիտ ստւերն երբ... Սուերները նոյնիսկ ազգայնութեան ամենատարրական պահանջների տեսակէտից: Ահա լայնածաւալ գաւառներ—Վեսարիա, Կիլիկիա ևն—ուր հայ զանգածները իրենց ճնշող մեծամասնութեամբ հայ են մնացել գրեթէ միայն իրենց ծագումով, ուր նրանք—չը նայած մեր ըէկլամասէր տիրացուական ազգասիրութեան—համարեա թէ կուլ են գնացել լեզուով բարբով մահմեդականութեան մէջ: Լեզուն, որ ազգայնութեան ամենաթանկագին գանձն է, դուրս է մղել բազմաթիւ վայրերում և փոխարինել օտար բարբառներով... Եւ դա յօժարկամ ձուլումն է, յօժարկամ ազգային ինքնասպանութիւն: Չուրում է սովորաբար

կուլտուրայէս ստորին ցեղը բարձրի մէջ, իսկ այդտեղ—
հակառակն է... Ահա մի արատ, օտարամոլութեան մի
դարաւոր ակտ, որ յուսանք, կը բուժւի աստիճանաբար
նոր սերունդներին կորովի ճիգերով, բայց որ, յամենայն
դէպս, թելադրում է հայ սակաւամիւլ շինգօններին՝ փոքր
ինչ չափաւորել իրենց աղմկասէր ազգամոլութիւնը, փոքր
ինչ մեղմել «ազգայնական գերազանցութեան» ֆէտի-
շիզմը...

Պէտք է հրաժարել միանգամ ընդմիջ չօլինիզմի
գրգռիչ ու ցոնցամոլ արտայայտութիւններէն, որոնք
վայրկեաններով կարող են դառնալ ուղղակի ճակատա-
գրական մի աշխարհում, ուր այնքան առատութեամբ
ամբարւած է թոյն, քէն, կասկած ու ատելութիւն:

Պէտք է թողնել և այն սև, անյոյս յոռետեսու-
թիւնը, որ ծայր է տալիս՝ մի չափազանց տխրալի բայց
ոչ անյոյս կացութեան հանգէպ... Ահ, հայ ժողո-
վուրդը—այս մէկն արդէն անժխտելի է—ցոյց է տուել
իր բազմադարեայ և անօրինակ հալածականութեան
մէջ մի կորով, մի բնատուր սոկոնութիւն, որ իր մե-
ծութեամբ հաւասարել է նրա տագնապին, նրա վայր-
կենական և խօլական յուսահատութիւններին: Հեռու
չարաշուք մարգարէութիւնները, որքան անպէտք է
ոմանց քարոզած ծոյլ ու ծանծաղ, անդորրապաշտ լա-
ւատեսութիւնը, որ ատող է ճիգ ու կորովի, որ կարող
է անդամուծել ազգային ինքնապաշտպանութիւնը—
նոյնքան անպէտք ու անհիմն է այն մռայլ յոռետե-
սութիւնը, որ հակած է իսպառ սեցնելու, *tabula*
rasa-ի հաւասարեցնելու օսմանեան ժողովրդի քաղա-
քացիական և բարոյական բարտեզը: Այդ ըմբռնումը
չի համապատասխանում իրականութեան: Աբրջինի մէջ,
բարեբախտաբար, կան և առողջ ու բնականոն զար-
գացման սաղմեր, որոնք միացած մահմեդական զանգ-
ւածների աւանդական հնազանդութեան հետ—հնա-
զանդութիւն դէպի ուժեղ ու կորովի կենտրոնական իշխա-
նութիւնը—պիտի աջողեն հետզհետէ բարեշրջել երկիրը:

Մինչ այն՝ պէտք է ապաւինենք մեր ուժերին, ինք-
նապաշտպանութեան առողջ բնազդին, ազգային առողջ
էգօնիզմին:

կարօտ՝ դրուժիւնը բնականօրէն նա կարելի կը գտնին չափ-
շատ շահելու մտքով պիտի ջանայ իր բոլոր ուժովը և
երիտասարդի բովանդակ առուզութիւնովը աշխատել և
արտագրել մեծաքանակ, եթէ աշխատանքն այդպէս «կա-
պալով» է տրւած. մինչդեռ եթէ օրավարձով ըլլայ գուցէ
նա ուրիշ կէտքէն կէս ժամ մը դադարեցնել աշխատանքը
պատահաւ մը հաց ուտելու համար...

Բանւորութիւնը հետեւապէս նաև գործատունը որչափ
պուտաւ ապրանք արտադրէ, այնքան լաւ է, քանի որ փրոզ
դրամագլուխը նոյնքան աւելի անգամներ գործածւած
կ'ըլլայ ու շահն ալ կ'ըլլայ նոյն համեմատութեամբ աւելի:

Եւ ասանկով առաւօտուն մթնշաղկն, դեռ արեւուն յոյսը
չձեղքւած, կը վազեն մանկամարդ աղջիկները հարկերնե-
րով-հազարներով դէպի գործատուն, ուր գործակատարին
խոժոռ և գործարանատիրոջ սարսափազդեցիկ ակնարկ-
ներուն և ակնարկութիւններուն տակ անոնք պիտի շահին
իրենց օրւան հացը՝ փոխարէնը տալով իրենց կեանքի
գարունը ամբողջ:

Հաշիւով մը որ իր մէջ կեդրոնացուցած է կապիտալիս-
տական բռնապետութեան ամենէն նուրբ դարձաբարձիկու-
թիւնները և որուն մանրամասնութեանց մէջ մտնել չ'ար-
ժեքի բանւորութիւն այդ ընթացքով և օրական՝ ձմեռը 12,
իսկ ամառը մինչև 14—15 ժամ աշխատելով՝ հապիւ
կրտանայ 3—4 դրուշ (60—80 սանիտ), այդքանն ալ
ամենէն լաւ և ամենէն արագ աշխատողին միայն յատուկ
ըլլալով:

Ահ, եթէ այստեղ պէտք ըլլար ընել հաշիւը այս գորգի
ճարտարաբետի մէջ գոյուժիւն ունեցող «յաւելեալ
արժէքին», մենք զմեզ պիտի գտնէինք շահափորձումի
այնպիսի սոսկալի երևոյթի մը առջև, որուն նմանը մենք
չենք տեսնիր ոչ գերմանական Աեսթֆալիոյ երկաթեղինաց
հանքերուն, ոչ ալ Անգլիոյ կամ Հիւսիսային Գրանիայի
ածխահանքերուն գործառնութիւններուն մէջ:

Արտագրւած ապրանքներուն շքեղանքի առարկաներ
ըլլալը արդէն ինքնին կրնայ գաղափար մը տալ այդ մա-
սին, որովհետև Սերաստիոյ մէջ այդպէս գրեթէ ձրի
աշխատանքով ձեռք բերւած գորգերը որոշ գին չունին և
փոխադրելով պերճանքի կեդրոններ՝ կը վաճառուին իրենց
իսկական արժէքին գրեթէ քառապատիկ—հնգապատիկ
գնովը: Փաստ մըն ալ այն մասին այն՝ որ երբ ասկից 15
տարիի մը չափ առաջ առաջին կապիտալիստ մը կուգայ
Սերաստիա ուսումնասիրելու այստեղի *ferrai*-ը գորգա-
գործութեան տեսակետէն, պատրաստակամութիւն կը
յայտնէ, ինքնաբերաբար, արդէն մինչև 6—7 դրուշ օրա-
վարձ վճարելու այդ կը նշանակէ որ նա այդպիսի պայ-
մաններով իսկ բաւականաչափ շահաւէտ-շահագործելի
հող կը նկատէ Սերաստիոյ բանւորութիւնը, բայց ահա
կը գտնուին այն եղերական միջնորդներէն այստեղ ալ
ի մասնաւորի հայ «քրիստոնեայ» և «բարեպաշտ» քահանայ
մը որ անմիջապէս խորհուրդ կուտայ կապիտալիստին
լուել չիտուել այդքան «բարձր», «չլաւ» օրավարձերու
մասին, խոտանալով «ուզածին չափ» աղջիկներ գտնել
իրեն օրական 20, 30, 40, 60 փարայով:

Ու գործին հիմքը կը դրուի այդպէս ու շահագործումը
ու կեդրոնումը կը շարունակուի այնպէս դարձեալ—բնա-
կանօրէն հետզհետէ ստանալով աւելի կատարելագործեալ
աւելի նուրբ ձև.—դրամատէրները այնուհետև կը ստեղծեն
այդ կապալի սխտէմը: յետոյ կը հաստատեն իրենց
մէջ տեսակ մը սէնտիբա, ըստ որում կ'արգիլեն բանւո-
րութի մը՝ մէկ գործատունը թողուլ և անցնել միւսին,
կ'որոշեն տուգանքներ, օրէնքներ ևլն ևլն:

Ու շահագործումը կեդրոնումը բռնաբարումը առաջ
կերթան սանձարձակ, որովհետև ոչ որ չէ գտնուել տըն-
տեսական պայքարով հետաքրքրուող, որ դնէր այդ գնաց-
քին ցանկալի սանձը:

Տնտեսական այս դրուժիւնը Սերաստիոյ մէջ քայքայեր
է նաև երիտասարդութեան ֆիզիքական վիճակը և նա
կըստպառնայ դեռ ապագային վերածել Հայաստանի առողջ
սերունդները հիւանդկախ ցուրտներու բազմութեան մը:
Գորգաշինութեան միջոցին աշխատանքին սրահը շու-

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Փ Ո Ք Ր Ի Ա Յ Ք Ի Ի Ա Յ Ե Ր Ը

III

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Ահա վերջապէս բանւորութիւն 13 տարեկան կամ 14 և
արդէն «վարպետ» նա հիմա կրնայ այլևս առանձինն դե-
կավարել ամբողջ «թէղիկեացի» մը գործը և իր հսկողու-
թեան տակ աշխատցնել 2—3 կամ երբեմն նոյնիսկ 5
օգնականներ: Անոր վարձատրութիւնը այլևս օրականով
չէ, այլ «կապալով»: Գործարանատէրը մտածած է շատ
եղկելի և շատ հասարակ արամաբանութիւնով մը, որ
նկատի ունենալով բանւորութիւն ընտանիքին՝ «ուրհազ»

տով կը լեցել բուրգին թուշտող փոշիներովը և անդադար մինչև իրիկուն, բանւորուհիները այլևս օգ չէ որ կը շնչեն, այլ բուրգի մասնիկներով լեցած ու արտաշնչութիւնով ապականած աստուր կաղ մը, որ կրտսաննէ հէգ աղջիկներուն թոքերը: Աւ պատուհան բանալը գոնէ երբեմն երբեմն, արգելած է գործարանատէրերուն կողմէ, որովհետև գորգերը լաւ՝ ըլլալու համար, պէտք է եղեր որ տաք տեղ գործէին անոնք...

Երկու տարի առաջ 19 տարեկան բանւորուհի մը մեռած է և դիագնոստիկան կատարելով կոկորդէն հանւած է ընկոյղի մեծութեամբ գունտ մը՝ բուրգի կտորուանքներէ գոյացած...

Բարեխիղճ բժիշկներ կը հաւաստեն թէ Սեբաստիոյ մէջ թոքախտը որ ազգաբնակչութեան հազիւ մէկ առ հազարին վրայ կ'երևէր, գորգագործութեան հաստատուէն անգին մէկ առ հարիւրի բարձրացած է, այսինքն տասնապատուեալ: Տեսանք մէկէ աւելի աղջիկներ, որոնց այտերուն վրայ երիտասարդական կրակին մոխիրը միայն մնացեր է այ ու կը հազան... Ատոնք այնուամենայնիւ կ'ամուսնանան և հիւանդութիւնը կը փոխանակեն նաև իրենց ընկեր տղամարդուն և դուրս կը բերեն երեսաներ, որոնք արտափարակ են իրենց լոյս տեսած առաջին օրէն իսկ...

Մենք աւելի չենք ծանրանար այս սխուր իրականութեան մասին, որ մեզ իր ամբողջ գրւագներովը կը ներկայանայ իբրև սոսկալի ողբերգութիւն մը...

Աւ նոյն կեանքին, նոյն ողբերգութեան, դանաղան տպագրութիւններն են նաև միւս բոլոր բանւորներուն և բանւորուհիներուն կեանքը: Մտամորմըք է Մարտեանի կտուրագործ բանւորներուն շահագործման սխտէմը, անիմանալիօրէն ցաւագին է Տօբատի պղնձագործ բանւորներուն տառապանքոտ վիճակը, որոնք օրական 12 ժամ անդադրուած կ'անոյ մը կը ծեծեն մետաղը դժոխանման հնոցի մը գէմ, 6 կամ 7 դրուշի փոխարէն:

Եւ ի լրումն չարեաց, ի՞նչ կուտեն այս բոլոր տանջողները իրիկան, երբ տունը իրենց զաւակներով կը հաւաքին սեղանին շուրջ:— ցամաք հաց մը որ զուտ ալիւրով ալ շինւած չէ:

Ահա թէ ինչպէս կը ներկայանայ անտեսական վիճակը Փոքր-Հայքի բողբոջներուն մէջ:

Եւ էլի պիտի ըսեն հիմա արդեօք, թէ անտեսական պայքար չկայ Թիւրքիոյ մէջ, կապիտալիստական կարգերու կարծատես porte-voix-ները էլի պիտի պողա՞ն թէ մեր մօտ չկայ դրամատիրական շահագործում...

Հ Ս Մ Ա Ս Ո Ղ Ո Վ Ր Գ Ս Կ Ա Ն Բ Ա Ն Ա Կ

"It is for you to urge upon all the necessity of placing yourselves in a position of an armed nation — a nation such as the Swiss, whose strength lies not in its numbers or in its military organisation, but in the spirit of those who love their country and are prepared to die for it"—
Lord Salisbury May 9, 1900.

I

Չկնորագրութեան օրէնքն ընդունեց: Ամբողջ Օսմանեան երկիրը պիտի ներկայացնէ այսուհետև մի ձոյլ բանակ, կազմած իր բոլոր կենսատու տարրերից, առանց խտրութեան ցեղի, կրօնի ու դաւանանքի: Մի քայլ ևս արեւց դէպի երկրի խաղաղացումը, դէպի նրա ներքին կազմաւորումն ու վերաշինումը: Դա արգա-

րու թեան յաղթանակն է և միանգամայն բանակաւ թեան:

Երանի՛ սխալւած չը լինէինք մեր յոյսերի մէջ և այդ արգարութիւնը չը բռնաբարէր ապագայում նոր, յետագէմ որոշումներով կամ անիրաւ սահմանափակումներով: Օսմանեան պարլամենտի մեծամասնութիւնը կազմող անհասները, տարաբախտաբար, նոյնքան դիւրութեամբ փոփոխում են իրենց կարևոր որոշումները, որքան դիւրութեամբ ուտում են, խմում... Առ այժմ փաստը հրապարակի վրայ է, օրէնքն արդէն քէտարկւած է և նա մէկն է այն սակաւթիւ լուսաւոր կէտերից, որոնք փայլիլում են խակ ու յետագէմ որոշումների մութ հօրիզոնում...

Չինւորական վերակազմութեան ծանրակշիւ խնդիրը դրւում է երկրի մտաւորական ուժերի առջև: Հարկաւոր է արծարծել այն՝ և ցոյց տալ— գէթ ընդհանուր գծերով—այն անհրաժեշտ ու հիմնական բարենորոգումները, որոնք տանում են աստիճանաբար — ե՞րբ կը հասցնեն՝ յայտնի չէ—գէպի բուն ռամկավարական զօրասիստեմը, դէպի այն ընդհանուր, համաժողովրդական բանակը, որ արձանագրւած է ժամանակակից բոլոր ռամկավար կուսակցութիւնների, ի թիւս նրանց և Հ. Յ. Դաշնակցութեան, ծրագրի մէջ:

Պէտք է յար և միշտ ներշնչել արևմտեան իդէալներով, և որքան էլ մեր իրականութիւնը լինի մռայլ ու յետամնաց, որքան էլ մեր միտքը, ընդհանուր երկրի ստեղծագործող միտքը, կաշկանդւած լինի կրօնների, հին, քարացած դաւանանքների պատուաւաններով, որքան էլ դժւարին լինի հետեւի քաղաքակիրթ ու ռամկավար արևմուտքին, կերպարանափոխել մեր կեանքը համաձայն նրա պահանջներին ու հրամայականներին—պէտք է, այնուամենայնիւ, մշանջնապէս ունենալ մեր աչքի առջև այդ արևմտեան կեանքի կաղապարներն ու իդէալները, բալել նրա գծած ուղիով, տոգորել նրա առաջագէմ զաւակների մտահոգութիւններով և իղձերով... Որովհետև դրա մէջ է փրկութիւնը,—մենք պէտք է առայժմ ընդօրինակենք: Քաղաքակրթութեան արևը երբեմն էր ձառագայթում միստիկական, առեղծուածային Արևելքից, բայց նա վաղուց մարել է այնտեղ, տեղի տալով Արևմուտքի հոյակապ, արգասաւոր Արևին, որ կուզած է աւելի ուղիղ ձանապարհով, աւելի հաստատուն ու ապահով հանգրւաններով առաջնորդելու բազմաբարձր մարդկութիւնը դէպի բարօրութիւն, ապատութիւն ու հաւասարութիւն...

Պէտք է ձգտենք ընդօրինակել և իւրացնել մտքի ու իրականութեան աշխարհի մէջ Արևմուտքի մատակարարած պատրաստի բարիքները, որպէսզի դատապարտւած չը լինենք կրկնելու առաջագէմ ժողովուրդների արդէն գոցած շրջանները, նրանց դարաւոր էօսիլիցիայի տանջանքները:

Չօրքը չը պէտք է բաժանւած լինի ազգային մարմնից, որպէս մի կաստ, զօրք և ազգ, զօրք ու պետութիւն, զօրք ու հայրենիք՝ պէտք է կազմեն մի ներդաշնակ ամբողջութիւն—ահա թէ ինչ է ասում արևմտեան հետևողական ռամկավարութիւնը:

Ներդաշնակութիւնն ու մտերմութիւնը, մտքերի և

զգացումների ազգակցութիւնը պէտք է տիրեն զօրքի այլևայլ հատուածների մէջ—ասա նրա մի այլ նշանաբանը:

Ահա երկու նշանաբաններ, որոնք իսպառ բացակայում էին բունհայութեան օրերով և որոնք այժմ, սահմանադրական Ցածկաստանում պիտի սկսեն կամացկամաց արծարծել ու աստիճանաբար իրականանալ:

Կատարած յեղափոխութիւնը արդէն մասնակի ներազօրծում է այդ երկու նշանաբաններին: Արդարև:

1. Ընդհանուր հայրենիքի անձեռնմխելիութեան ու բարգաւաճման անունով էր, որ Նիպոլիտներն ու Էնվերները ծածանեցրին ապստամբութեան դրօշը: Նրանք ցաւ ու կսկիծով էին դիտում, թէ ինչպէս հայրենագաւ բունաւորը, Վաղարշի ընդհանուր XV-ի «après moi, le déluge» նշանաբանն իւրացրած, պատառ-պատառ վաճառում էր երկիրը եւրոպական ընչաքաղց կապիտալիզմի ներկայացուցիչներին, նրանք տեսնում էին, թէ ինչպէս Փիլիքական յօշոտման հետ կատարւում էր և երկրի մտաւոր ու բարոյական յօշոտումը...

2. Յուլիանան Յեղափոխութիւնը և ազատագրական երկրորդ դրօշը ապրիլեան տազնապալի օրերում՝ պնակեց աջողութեամբ, շնորհիւ այն մտերմութեան, մտքերի ու զգացումների այն գեղեցիկ ներդրողականութեան, որ տիրում էր մակեդոնական բանակի այլևայլ հատուածների, սպանների, բարձրագոյն հրամանատարների և պարզ զինւոր-հայրենակիցների միջև:

Երկու խոշոր հասարակական իրողութիւններ և երկու խոշոր քաղաքացիական առաքինութիւններ:

Պէտք է երկուսն էլ աստիճանաբար մշակել ու կատարելագործել: Հասցնելու համար—հեռու, անյայտ ապագայում—իրենց բնական ու արամաբանական նպատակակէտին:

Զօրքը անհրաժեշտօրէն պիտի դառնայ—իր բոլոր հատուածներով—ընդհանուր հայրենիքի, բովանդակապէս օսման ցիւղութեան շահերի ու բազմաբնիկ հարազատ արտայայտիչ: Օսմանեան զօրք և օսմանցիութիւն պիտի կազմեն ոչ հակամարտ էութիւններ, այլ ներդաշնակ մի միութիւն: Եւ միևնոյն ներդաշնակութիւնը պիտի շեշտէի այսուհետեւ բանակի այլազան հատուածների միջև, ոչ միայն տարբեր աստիճաններով, այլ և տարբեր ազգայնական մասնակցութիւններով—թիւրք ու հայ, բուլղար ու հրէա, բիւրդ ու ալբան, յոյն ու արաբ զինւորների միջև: Եւ բոլոր ազգերի համար հաւասարապէս մատչելի պիտի դառնան բոլոր աստիճանները:

Մեքենայական, բունարատեալ դիսցիպլինը պիտի տեղի տայ աստիճանաբար այն մտերմական, ինքնայորդոր համերաշխութեան ոգուն, որ ուժեղ է ընդհանուր հայրենիքի բարօրութեան գիտակցութեամբ: այդ ոգին է հաղորդում բանակներին այն անսովոր ուժն ու կորովը, որով նրանք տազնապանների վայրկեաններում դառնում են անպարտելի:

Որքան ահաւոր պատասխանատուութիւն է ծանրանում ներկայումս Թիւրքիոյ զինւորական վերանորոգիչների վրայ: Որքան սերունդ կախումն ունի օսմանեան հայրենիքի ճակատագիրը դաստիարակութեան այն մեթոդներից, որոնք պիտի կիրառւին այսուհետեւ զօրքի մէջ...

Ինչ է պէտք մեզ: Ոչ, ի հարկէ, աշխարհակալող մի բանակ, նւաճողական ձգտումներով տոգորւած լէգէօններ: Նւաճումների պէտք չունինք մենք: Այն էլ արդէն հսկայական մի գործ է, որ կարողանանք եղածը պահել ու բարօրացնել: Օսմանեան հայրենիքը պէտք ունի խաղաղութեան ոչ միայն փոխանցումի այս ծանր շրջաններում, ուր նա պիտի կենտրոնացնէ իր համեստ ուժերն ու ճիգերը ներքին ահաբեկի աւերածների վերաշինութեան վրայ, այլ նա առհասարակ պէտք է խոյս տայ նւաճողական պատերազմներից, որոնց դէմ են իրենց կենսական շահերով, իրենց բովանդակ էութեամբ Թիւրքիոյ աշխատաւոր ժողովուրդները:

Օսմանեան վերակազմաւոր ու ընդարձակած բանակը պիտի ծառայի ոչ թէ տիրող արքայատոհմի ու ցեղի, ոչ թէ այս կամ այն դասակարգի տիրապետութեան տենչանքներին, այլ բացառապէս ընդհանուր հայրենիքի պաշտպանութեան: Նա պէտք է, հետևապէս, մարզի, դաստիարակի այդ ուղղութեամբ: Նա պէտք է բացառապէս ներշնչւած լինի այն ինքնապաշտպան և ինքնագոհ հայրենասիրութեամբ, որ բնորոշում ու ներբողում է լօրդ Սոլսբերիի մեր ներածական տողերի մէջ. «Մի այնպիսի սպառազէն ազգասոււմ է հանգուցեալ լօրդը—որի ուժը լինի ոչ թէ իր քանակի կամ զինւորական կազմակերպութեան մէջ, այլ այն ոգու, այն անհատների ոգու մէջ, որոնք սիրում են իրենց երկիրը և պատրաստ են մեռնել նրա համար»... Եւ նա օրինակ է բերում ինքնապաշտպան Շվեյցարիային:

Աստիճանաբար ռամկավարացնել բանակը, աստիճանաբար մօտեցնել նրան ժողովրդին, մարդկայնացնել բարձր ու ստորին աստիճանների, ապա և տարբեր ազգայնական բաղադրիչների յարաբերութիւնները, կրճատել հետզհետեւ զինւորական ծառայութիւնը, նւազեցնել այդ բոլորի հետ և նրանցով իսկ միլիտարիզմի ահուկ պատուհասը, որ անցեալ դարու 70-ական թւականներից ի վեր կրճոււմ, մաշոււմ է օսմանեան պետութեան վտիտ օրգանիզմը—ասա թէ որը պէտք է լինի վերածնուող Ցածկաստանի բոլոր ռամկավար տարրերի առաջնագոյն պարտաւորութիւններից մինը:

Միլիտարիզմ և ռամկավարացում (democratisation)—երկու հակամարտ գործողութիւններ են ամենուրեք, յամառ ու մշտնջենաւոր պատերազմի մէջ: Մինը վաղ թէ ուշ կ'անելու է միևսին: Տեսնենք թէ ինչպէս են զարգանում երկու հակօտենաները արևմուտքում:

II

Միլիտարիզմի յարաճուն չարիքը դառնում է օրէցօր ամենաճանր վտանգներից մինը՝ բոլոր երկրներում: Եւ զարմանալի չէ, որ նրա դէմ կազմակերպւած արշաւանքն ևս հետզհետեւ աճում է իր խորութեամբ ու ընդարձակութեամբ, նա գրաւում է ոչ միայն ճնշւած աշխատաւոր դասակարգերն ու նրանց՝ պաշտպան սօցիալիստական կուսակցութիւնները, այլ և բուրժուա մտաւորականութեան որոշ խաւերը:

Որտեղից է գալիս այդ պատուհասը և ինչ է այդ արշաւանքի նպատակը:

Նա գալիս է նոյն աղբիւրից, որից բղխում են նո-

րագոյն կապիտալիզմի ու դասակարգային տիրապետութեան բոլոր չարիքները: Բիսմարկեան Գերմանիան տւեց առաջին զարկ-նշանը — անցեալ դարու երկրորդ կիսում — և բոլոր պետութիւնները գահավեժ սլացան նրա ետեւից: Փոքրիկ Պրուսիան վաղուց արդէն և առաջինը ոտք էր դրել նորագոյն միլիտարիզմի ճանապարհի վրայ, կազմակերպելով իր տւեռներէն զրահաւորած բանակը, մարտելով այն կոյր, երկաթէ դիսցիպլինի մէջ, պատրաստելով այն զուտ յարձակողական, նւաճողական նպատակների համար: Այդ զուտ մտերուն, ժամանակակից զորաստիստները, իր մնայուն, կուռ ու կարգապահ լէգէօններով, օժտւած դարի բոլոր նշանաւոր գիւտերով, կատարելագործումներով, ստեղծեց յետապալում — արեան, կրակի ու երկաթի ճանապարհով — գերմանական միացեալ կայսրութիւնը, բայց և միւս կողմից անբաւ չարիքների ազդիւր դարձաւ աշխարհի համար: 19-րդ դարի չարագործ հանձարը, Բիսմարկ, կարողացաւ անսովոր փայլ ու թուխք հաղորդել զինաւորութեան ու աշխարհակալութեան այդ նոր սիստեմին և վառեց բոլոր պետութիւնների խորթակը:

Ահաւեց ամբողջ երկրագնդի վրայ զինաւորման մի համաձայնեցող տենդ, բոլորն էլ սկսեցին ընդօրինակել Պրուսիային, աճեցնել իրենց զինւորական ուժը ծովի ու ցամաքի վրայ, մասամբ երկիւղից՝ նոր բարձրացող ու աշխարհակալող տիտանի հանդէպ, մասամբ էլ մղւած նոյն «տարածման» (expansion) ու աշխարհակալութեան ակորթակներով:

Յրանսիան 1871-ի սարսափելի թւականից ի վեր գերմարդկային ճիգեր թափեց՝ վերակազդուրելու, հաւասարելու իր պատմական ոսոխին, նոյնիսկ նրան գերազանցելու... Անհուն ծախքեր, հսկայական զոհեր խլեց նոր Մոդըրը երրորդ հանրապետութիւնից:

Միլիտարիզմի յորձանքը կլանեց նաև արևելեան կիսա-կուլտուրական պետութիւնները. Ռուսաստան, Թիւրքիա, Իսպանիա և այլն ընթացան նոյն ճակատագրական ուղիով: Ռուսաստանը, որ ապրեց իր պատմական «պօգ-րումը» Ղրիմի պատերազմի մէջ, ձգտեց այնուհետև վերակազմել իր զինւորական խորխուր ու փրօտ՝ օրգանիզմը և ուժ տւեց զինաւորումներին:

Թիւրքիոյ համար այդ փոխանցման շրջանը պէտք է ընդունել ուռս-թիւրքական պատերազմի տագնապալի թւականները: Պէտք է նկատել, որ միլիտարիզմի հակումները դարերից ի վեր ուժեղ են եղել Թիւրք տիրապետող ցեղի մէջ: Թիւրքիան ի սկզբանէ, դեռ արևելեան Հռոմի նւաճման ժամանակներից ի վեր, հանդէս է եկել, իբրև էապէս զինւորական մի պետութիւն, ուր բունի, աշխարհակալող ուժը խեղդել է բոլոր ուրիշ մտահոգութիւնները, կաշկանդել է երկրի թէ նիւթական և թէ մտաւոր-կուլտուրական ուժերի զարգացումը: Զինւորական դասակարգն այդտեղ ունեցել է գրեթէ առանձնացած, կաստային կերպարանք, գրաւել է միշտ բարձր, արտօնեալ դիրք պետական արժէքների սանդուղքի վրայ և վայելել է ընդհանուր յարգանք իր հարազատ միջավայրում: Այդ էական հանգամանքներով պիտի բացատրել և Յուլիսեան Յեղափոխութեան դիւրին ու շուտափոյթ ազդուութիւնը: Նրա գլուխը կանգնած էր զինւորական դասակարգը, որ ոչ միայն ամենաազդեցիկ, այլ և միանգամայն ամենակրթ-

ւած գործունէ էր օսմանեան, մահմեդական աշխարհում: Տաճկաստանը, ինչպէս և բոլոր ուրիշ յետամնաց երկիրները, պատմական կատաստրօֆների ազդեցութեան տակ, շտապեց համակերպել անողոր անհրաժեշտութեան — վերակազմել իր բանակը եւրոպական կազմակերպութեամբ, կրթել, դաստիարակել ու աճեցնել: Այդտեղ ևս, ինչպէս Ռուսաստանում, քաղաքակրթութեան ու յեղափոխութեան գաղափարները ներս թափանցեցին... զօրանոցների միջոցով: Այդտեղ ևս, ինչպէս Ռուսաստանում (անցեալ դարու 20-ական թւականներին), յեղափոխական շարժման նախորեակին, օֆիցերութիւնը, սպաները կազմում էին իրենց թւով ու որակով մի պատկառելի մտաւորականութիւն, ինտելիգենցիա...

Դրանք նորագոյն միլիտարիզմի լուսաւոր կողմերն են, կան և սոււերները... Դիւրին բան է պահպանել, սնուցանել կէս-միլիոնաւոր մի բանակ... Լուծը ահռելի է և գուցէ ոչ մի ուրիշ պետութեան մէջ միլիտարիզմի պատուհասը այնքան կործանիչ ազդեցութիւններ չի ունեցել աշխատաւոր ժողովուրդների վրայ, ինչպէս Թիւրքիայում, որը հուշակաւոր և իրազեկ գեներալ Փօնդեր-Պօլցի վկայութեամբ իսկ հանդիսանում է Եւրոպայի ամենամիլիտարական պետութիւնը... Լուծը ահռելի է, որովհետև երկիրը — շնորհիւ բռնութեան դարաւոր թագաւորութեան — միանգամայն ուժասպառ է եղել, ցամաքել են արդիւնաբերութեան, «ազգային հարստութեան» ազդիւրները և միլիտարիզմի խելագար ծախքերը ընկնում են առանց այն էլ թալանւած, խեղճ ու կրակ ազգաբնակչութեան վրայ:

Դառնանք Արևմուտքին: Ամենուրեք, ուրեմն, մշտական բանակներ (armées permanentes), ընկած իրենց արձիճային ծանրութեամբ աշխատաւոր ազգաբնակչութեան ուսերի վրայ, որից խլում են ամեն օր և ամեն ժամ ամենակենսական հիւթերը: Նպատակը... Պահպանել մի երբուրև խաղաղութիւն — Սպանազէն Կաղաղութիւնը — որ պատրաստ է ամեն վայրկեան խզել արիւնոտ խրախճաններով: Նպատակը... պահպանել մանաւանդ «ներքին անդորրութիւնը», թոյլ չտալ, որ հարստահարւած ու տանջող ժողովուրդը ըմբոստանայ իր կեղեքիչ դասակարգի դէմ, թոյլ չը տալ որ բողոքի յարածուն ալիքները ճնշւածների բանակում բարձրանան ու հեղեղեն առանձնաշնորհեալ դասակարգերի ապարանքները: Նպատակը... ստրկացնել միանգամ ընդմիշտ աշխատաւոր ու մարտնչող ընդհանրութիւնը, յաւերժացնել կապիտալի մենաշնորհը և ձրիակեր դասակարգերի ոճրանիւթ տիրապետութիւնը...

Տեսէք, թէ ինչպէս քաղաքացիական պայքարների, ժողովրդային ցոյցերի, բանւորական գործադուլների միջոցին սպառազինւած վաշտերը գրոհ են տալիս աշխատաւոր շարքերի դէմ, ցրւում, հալածում և ի հարկին կոտորում: Նրանք միջամտում են կապիտալի ու աշխատանքի ընդհանրութեան մէջ միշտ ի նպաստ կապիտալի, միշտ ի վնաս աշխատանքի. նրանք յայտնում են ամեն պարագայում իշխող, դրամատէր դասակարգերի շահերի պաշտպան, կոյր, աւտօմատ ու հնազանդ գործիք:

Այդ ոգով էլ դաստիարակւում են նրանք: Մաճից, գործարանից և ընտանիքից խլելով ժողովրդի զաւակ-

ներին՝ երկար տարիներով մաշեցնում են զօրանոցների քարշ մթնոլորտում, որպէսզի պատրաստեն նրանցից... Ի՞նչ Արդեօ՞ք միայն «Տայրենիքի պաշտպաններ»։ Բայց արդեօք Տայրենիքի պաշտպանութեան զինւորներ պատրաստելու համար՝ անհրաժեշտ է ամբողջ տարիներով անջատել այդ հարիւր հազարաւոր պատանիներին իրենց անօգնական աշխատաւոր ծնողներից, որոնց յաճախ միակ ապաւէնն են նրանք։

Երբէք։ Մենք ցոյց կը տանք պերճախօս օրինակներով, որ հայրենապաշտպան ընդունակ ու մարդաժ գինւորներ կարելի է պատրաստել— և վաղուց պատրաստում են— շատ աւելի կարճ միջոցով, շատ աւելի պակաս ծախք ու զոհողութիւններով և երբէք չ'անջատելով զինւորներին՝ ոչ իրենց ծնողներից, ոչ էլ իրենց բաղաբացիական պարտաւորութիւններից ու պաշտօններից։

Ժամանակակից կապիտալիստական պետութիւնը մէկ գլխաւոր նպատակ ունի զօրանոցներում ըստ կարելոյն բթացնել զինւորներին— երկարատեւ, յաճախ աւելորդ ու ահռելիօրէն տաղտկալի մարզանքներով— կռել նրանց երկաթեայ, անասնացնող դիսցիպլինի մէջ, դարձնել նրանց ճշմարիտ մարդ-մեքենաներ, որպէսզի նրանք «ի վերուստ» հնչող հրամանի վրայ՝ ստրուկ ու անձայն գնան մղելու նոյն կապիտալիստ դասակարգերի շղթա-յազերծած ժողովրդասպան պատերազմները, որպէսզի գնան միաժամանակ «հանգցնելու» և «ներքին խռովութեան» հնոցները, որպէսզի կատարեն հլու, անմուռն հնազանդութեամբ գերմանական այժմեան կայսրի նշանաւոր խօսքն, ուղղած իր զինւորներին.

— «Երբ հնչի իմ կայսերական հրամանը, դուք պէտք է պատրաստ լինէք՝ հրացանի բռնելու, անգամ ձեր հարազատ ծնողներին»...

Պ Ա Ր Ս Կ Ա Ս Տ Ա Ն

ԲՈՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Ասիոյ մէկ ծայրէն միւսը թարմ ու փրկարար հովմը կը փչէ. բնթաթախ ու յորանջող ժողովուրդները կենդանութեան նշաններ ցոյց կուտան. առասպելական անշարժութիւնը որ կը դամբանէր Ասիան՝ յարութիւն կառնէ։ Ասիան ասիացիներուն։

Ասիոյ մէջ կատարւած նորագոյն շարժումներու աղբիւրը պէտք է որոնել ճափօնի յաղթութիւններուն ու վերածնութեան մէջ։ Մուկգենէն ու Յուշիմայէն յետոյ, Թիւրքիա «անպարտելի» ուժը չէր տեսներ այլևս Ռուսաստանի մէջ. Պարսկաստանի համար Ռուսիան կը դադրէր ահարկու հսկան ըլլալէ. ֆաբրիներու Հնդկաստանը կը հմայափոխուէր և կը դադրէր յաւիտենականութեան ու ճակատագրին անիւին տարիները հողովելէ։

Փրանսական Յեղափոխութիւնը ամբողջ Եւրոպան դարաշրջեց, փոքրիկ ճափօնը ալեւոր ու բարբարիկ Ասիային ինքնաձանաչութեան ոգին ներշնչեց և տարիներու և թերևս դարերու դաստիարակութեան դործը կատարեց այդ աշխարհին մէջ։

Ասիան իր ծոցին մէջ կը գրկէր ժողովուրդներ որ

աւանդութիւններու, բարբարոսութեան ու մոլեռանդութեան մէջ բարացած ու ունայնացած էին։ Անգլիա և Ռուսիա տէրն էին անոր ճակատագրին, այնպէս որ երկու մեծ պետութիւններու բաղաբացիական հակառակորդութիւնը կը կազմեն 19-րդ դարու ասիական պատմութիւնը։ Այդ երկու պետութիւնները իրենց աշխարհակալութեան և «գիտական» սահմաններու հետապնդումին մէջ, չկրցին գտնել հաւասարակշռութիւնը։ Ռուսիան յաւիտենական մղձաւանջը եղաւ Հնդկաստանի համար, որ կը կազմէր Անգլիոյ թագին մեծագոյն գոհարը, և միանգամայն միակ «խոցելի» կէտը բրիտանական տիրապետութեան։ Ռուսիա արևելեան հսկայ երազները կը սնուցանէր և իրեն կուտար Ասիոյ մէջ «բաղաբացիկ առաքելութեան» միսիօնը։ Գերմանիա զայն կը բաջալերէր հեռու պահելու համար ռուսական ուժի յենակէտը իր սահմաններէն։ Անգլո-ռուսական դարաւոր պայքարը ասիական տարածութեան վրայ նպաստեց որ Գերմանիա Եւրոպայի մէջ «գերակշռութիւն» ձեռք բերէր։ Ի զուր Պիքընսֆիլտ կըսէր, որ Ասիոյ մէջ ամեն մարդու համար «բաւականաչափ սենեակներ» կան։ Թշնամութիւնը զինաթափ չէր ըլլար, մինչև որ եկաւ ճափօնական պատերազմը և կասեցուց ռուսական թափը գոնէ երկար ժամանակի համար։

Ասիոյ ու Եւրոպայի մէջ առաջ եկած բաղաբացիական անտեսական յեղաշրջումները անդրադառնալ տւին երկու ոսոխ պետութիւններուն. բաղաբացիականութիւնը դուրս կ'ելլէր իր հին ահօսէն և կը հետևէր ժողովուրդներու բնաշրջումին։

Եւրոպան կըլգայ սարսուռը և զարթնումի նշանները մեծ հսկային որ երբեմն բարբարոսներու հօրդանները կը նետէր Եւրոպայի վրայ, կզգայ թէ հոն նոր աշխարհի մը երկունքը կը պատրաստուի։

Վոպիտ բռնակալութեան ու ստրկութեան աւանդական հայրենիքին մէջ ժողովուրդները հեռոցհեռ կը ջանան վեր բարձրանալ իրենց գետնամածութենէն և ազգային գիտակցութեան թելերը թրթռացնել։ Այդ անսահման բաօսի մէջ իդէալական բիւրեղացումներ առաջ կուգան, որ՝ տոգորւած եւրոպական յառաջդիմութեան ոգով, յեղափոխութեան ջահակիրները կը հանդիսանան։ Հոն, ուր իսլամութիւնը, պուտտայականութիւնը մարդկութիւնը անբանցնելու և երկիրը ամլացնելու ծառայեցին— ինչպէս բոլոր կրօնները— բաղաբացիկութեան ու ազատութեան ոգին կուգայ կերպարանաշրջել իրերը և ըմբռնումները։

Յեղափոխութեան կրօնը, իբր արդարութեան վրիժառու բազուկը, կը հետևի ազգերու մէջ նմանութեան օրէնքին։ Տառապող ժողովուրդները սիրտ կառնեն ուրիշ տառապող ժողովրդի մը քաջասրտութենէն։ Ասիական երեք պետութիւններ՝ Ռուսիա, Թիւրքիա և Պարսկաստան հրեղէն մկրտութիւններ ունեցան, ապա թէ ոչ Արևելքի մթնոլորտը անշնչելի պիտի ըլլար։

Պարսկաստանը որ կը կարծէր մեռելային անշարժութեան դատապարտւած, յեղափոխական գեղեցիկ խոյանքով մը նոր դարաշրջանի մը մէջ կը մտնէ և կը դնէ հիմը նորագոյն պատմութեան, ուր Իրանի ժողովուրդը կզգայ կը շօշափէ իր գոյութիւնը ու էութիւնը։ Մեծ ու պղտիկ բռնակալները— Շահերը ու հաքիմները— չէին սպասեր անշուշտ որ Զրևանը կարող էր

այդքան անողորմ հարւածներ տալ իրենց ճակատներուն:

Պարսկաստանի սահմանադրական շարժումը պատմական բնաշրջում մը չունի. կարելի է ըսել թէ անակնկալ կերպով յաջողութիւն ունեցաւ: Հասարակական հազարէակ շարժումներ, ինչպէս Պապիներու շարժումը, արիւնի մէջ խեղդամահ եղան: Պարսիկ ժողովուրդը կրօնի խոժոռ աղանդականութեան մը մէջ կղզիացած, ապաստած էր իր գեղեցիկ ընդունակութիւնը և բնական ձիրքերը: Իր պարսպապատ և բանտաձև տունները, ուր ոչ մէկ աչք չէր կարող թափանցել, կը կտրէին զինքը դրսի աշխարհէն. իր արտասովոր բարբերը, կենցաղը և միամիտ արհամարանքը դէպի օտարները զօր «պիղծ» կանւանէր, կը դատապարտէին զինքը տեսակ մը ինքնագերութեան, ուր իրանը հեշտաւէտ ու անիրական երազանքներու մէջ կանբարոյանար ու կը մտասպառէր:

Պարսիկ գրականութիւնը, «գինիով ու սերով» յափրացած, հեռու էր անոր շիղերուն մէջ կորովի և նախաձեռնութեան ելեկտրացումներ առաջ բերելէ: Պարսիկ յոյժ երևակայութիւնը օրօրեա՞ծ է հեշտային և սիրարբ գրականութիւնով ու հէքեաթներով: Այդ միակողմանի գրականութիւնը հաշիշն եղած է պարսիկ մտքին: «Երբ մեռնիմ, ոսկորներս գինիով լրացեմ» կըսէր խայամ կամ «Խմէ, վայելէ, գացողները ետ չեն դառնար»: Զրոգաշտը «դրախտի երկնային բոցը կը բերէր» իրանին. նոր Պարսկաստանը հին իրանի առաքինութիւններէն ոչ մէկը պահեց: Իսլամական կրօնը խեղդեց անոր մէջ ցեղին ինքնատուութիւնը և Զէնդ-Ավեստայի բարոյական իրէպը, որ ճառագայթեց երբեմն աշխարհի բոլոր կրօններուն մէջ: Նուրբ ալ թող գրականութիւն մը և կրօնը միացած հիւսեցին այդ ժողովուրդին մէջ միտքի ու ինքնամտքի ոգի մը, ուր զգայապաշտութիւնը կը դառնար միակ առանցքը անոր անհատականութեան:

Պարսկաստանի դժբախտութեան ու յետամնացութեան պատճառները պէտք է նաև որոնել անշուշտ իր աշխարհագրական միջանկեալ աննպաստ դիրքին ու երկրի քաղաքական անվերջ փոփոխութիւններուն մէջ, երբ արևելքի բարբարոսները հովի պէս կարշաւէին ու քարուքանդ կընէին զայն, ինչպէս նաև երկրի անտեսական պայմաններուն մէջ: Իրանի լեռնադաշտը աշխարհի այն երկիրներէն է, ուր բնութիւնը ջուրի մասին ամենէն ժլատն եղած է. հոն չկան մեծ հոսանքներ՝ որ երակաւորեն տարածութիւնները: Գիւղերու գոյութիւնը յաճախ այդ երկրին մէջ կապւած է մատ մը ջուրի հետ և այդ պատճառով երկրին կէսը գրեթէ անապատային և աւերակ վիճակ մը կը ներկայացնէ: Բարեկարգ ու ժողովրդասէր ըէժիմ մը պիտի կրնար դարձանել այդ չարիքը, բայց դժբախտաբար ցարդ պարսիկ կառավարութիւնները իրենց ժողովրդի բարօրութեանը մասին մազի չափ օգուտ չեն ունեցած, ընդհակառակը հոգեւորականութեան հետ ուսուսի հետամուտ եղած են, որքան հնար է, տգիտութեան ու մոլեռանդութեան աղտին մէջ թաթաւել և օտարատեսաց ընել զայն: Այդ տարօրինակ հոգեւորականութիւնը ժողովրդին ներշնչած է արհամարհանք դէպի հողային աշխատանքը որ մարդս «կտրիպէ ծով»:

Կառավարութիւն, հոգեւորականութիւն, բնական ու անտեսական աննպաստ պայմաններ, կարծես դաշնակցած

դարերէ ի վեր նպատակ դրած են ոչնչացնել իրանի պէս գեղեցիկ երկիր մը և մաշեցնել ժողովուրդ մը որ իրէպալականութեան խմորը ունի իր մէջ, զգայուն, երազուն ու մտարթուն:

* *

Պարսկաստանը քաղաքականապէս վտանգի տակ էր: Իբրև պետութիւն կարելի է ըսել որ ոչ մէկ կազմ և դրական ուժ չներկայացնելով արտաքին պատահականութեան դէմ՝ բախտին խաղալիք դարձած էր: Անգլիա և Ռուսիա տէրն էին այդ երկրին. թերևս կէտին և արջին հակառակութիւնն էր որ ցարդ պահպանեց անոր ամբողջութիւնը: Անգլո-ռուս համաձայնութեան մէջ Ռուսիա կը նշմարէր իրագործումը Պարսկաստանի հիւսիսային մասին հետզհետէ գրավման: Անգլիա՝ որ այդ համաձայնութեան մէջ սաստիկ քննադատեցաւ, Պարսկաստանի բախտը Ռուսիոյ մատնելուն համար, կըցաւ մէջէն ելլել դրդելով սահմանադրական շարժումը, միակ ճամբան ռուսական կամկորութիւնը կաշկանդելու համար: Այնպէս որ երկու համերաշխ ու բարեկամ պետութիւնները, մէկը Շահին, միւսը ժողովրդի իրաւունքներուն պաշտպան կանգնելով, ընդերկար պայքարեցան, առանց, յայտնապէս, բռնաբարելու իրենց դաշնագրի ոգին:

Ռուսիոյ խուլ ու դաւադիր ջանքերը, յեղափոխութիւնը խեղդելու և Շահի բռնակալութիւնը պաշտպանելու համար՝ չպսակեցան: Անգլիոյ խորհրդարանին մէջ խուժը մը ազատականներ, ինչպէս և ազատական մամուլը հանգիստ չձգեցին Էդ. Վրէյը և մտրակեցին զայն որ ջանայ հեռացնել ռուսական վտանգը Պարսկաստանի գլխէն: «Պէտք է մասնանիշ ընել մեր կառավարութեան թուլութիւնը և յիմարութիւնը», կը գրէր Outlook: Միւս կողմէ Ռուսիա կաշխատէր երկրին մէջ ընդդիմադրութիւնը և անիշխանութիւնը բաշխելով, պատրուակ ստեղծել միջամտելու համար:

Ի պատիւ Անգլիոյ պէտք է ըսել որ յաջողեցաւ փրկել Պարսկաստանի դրութիւնը և... էութիւնը: Մէկ պարսիկ գրող կընդունի որ գերմանական ազդեցութեան երկիւղը ոչ նւաղ նպաստած է որ Անգլիա և Ռուսիա փութացնեն սահմանադրական հարցի լուծումը, բայց կընդունի նաև որ Անգլիա Deus ex machina—ճիշտ ըրապէին հասած փրկիչ մը եղաւ Պարսկաստանի համար: Երկիրը փրկելու միակ ելքը Շահը պատժել կամ դահլենկեց ընելն էր: Երկրին փորձանքն էր ան ու Ռուսիոյ կոյր կամ դիտաւոր գործիքը:

Բայց Շահը կը վայելէր Ռուսիոյ բացարձակ հովանաւորութիւնը, ատոր համար էր որ անպատիժ կը հարւածէր սահմանադրութիւնը և կը հալածէր երկրին ազատական ուժերը: Թէպէրիզը երկու տարւայ հերոսական դիմադրութենէ յետոյ ռուսաց թաթերուն տակ ինկած էր: Մահայն անոր ղէնքերու շահահիւնը արթնցուցեր էին ժողովուրդը, որ սկսած էր համոզուիլ թէ սահմանադրութիւնը միակ փրկութիւնն էր երկրին և թէ Շահը կը դաւաճանէր հայրենիքին: Հարաւէն Պախտարի լեռնականները, իրենց կրթւած ցեղապետին առաջնորդութիւնով, և հիւսիսէն ազգայնականները փորձ և կտրիճ առաջնորդներով կազմակերպեցան և քալեցին Թէհրանի վրայ, նենգամիտ Շահը դահլենկեց ընելու համար:

Այդ վճռական շարժումը կը յիշեցնէ օսմանեան յեղափոխութիւնը, երբ Բուժէլիի բանակը կը խոյանար և Աբգիւլ Համիդը վար կը նետէր գահէն: Ռուսիա ջանաց վարկաբեկել այդ հայրենասիրական շարժումը, տարածախելով թէ չինական «կոփամարտ» ներու նման շարժում մըն էր ան՝ օտարականներուն դէմ ուղղած: Մոսկովական այդ խաղերը քիչ արձագանք գտան կամ բնաւ, որովհետև ազատական գունդերը՝ որոշ ուղղութիւնով կը գործէին և իրենց նպատակը յայտնի էր աշխարհի, մանաւանդ որ իրենց սլաքները վերապահուած էին միայն և միմիայն Շահին ու երկրի ներքին թշնամիներուն: Իւ յետոյ անբնական էր որ ազատութեան համար կռուող բանակ մը թող տար իրեն արիւնասէղ միջոցներ և բարբարոսական արարքներ: Պարսիկ յեղափոխականները սկիզբէն մինչև օրս ցոյց տուած են ասպետական ոգի և գաղափարական գիտակցութիւն: Ռուսները միայն իրենց շահերուն և նպատակի տեսակէտով փորձեցին ծամածռել պարսիկ յեղափոխութեան ոգին և բարոյապէս սպաննել ազատական շարժումը:

Բեթրսպուրկի բոլոր ինտրիկները վարպետութիւնները, դիւանագիտական նօթաները կարելի է ըսել որ մեծ յաջողութիւն մը չպարգևեցին ռուսական նպատակներուն: «Ռուսիան չկրնար իր թաթը դնել պարսկաստանի վրայ» կողբարարէին գերման պետական մարդիկ: Ռուսիոյ կը մնար ընկրկիլ և սպանել հաստատ և անհերքելի պարսկաններու Պարսկաստանի ներքին գործերուն միջամտելու համար: Ռուսիա, իրերու ուժին առջև տեղի տալով, — չստեղծելու իրեն համար սնիական նոր արկածախնդրութիւններ, որ կրնար միջադրային կնճռոտութիւններ առաջ բերել, — կը համակերպի ընդունիլ Պարսկաստանի մէջ կատարուած փոփոխութիւնը և կաշխատի սիրաշահիլ պարսիկ ժողովուրդը, որ լայրացած ռուսներու օտնձգութիւններուն և դաւերուն դէմ, որոշած էր պոյիտ յայտարարել ռուս վաճառականութեան դէմ: Ռուսիոյ համար անմտութիւն պիտի ըլլար վտանգել իր առևտրական շահերը Պարսկաստանի մէջ, որ իր աղքատ վաճառականութեան կարևոր շուկաներէն մէկն է: Պարսիկները, որքան որ՝ դառնացած, անքաղաքագիտական քայլ մը առած պիտի ըլլային, եթէ շարունակէին քէնոտան հաստատութիւնը իրենց հզոր դրացիին դէմ՝ որ ամեն ըրպէս Դամոկլէսի սուրին պէս կախուած է ծոծրակուն վրայ: Այդ կէտը հասկանալով է որ խուճը մը սահմանադրականներ, պահելով իրենց երկրի անկախութիւնը և արժանապատուութիւնը, կաշխատին վերահաստատել Ռուսիոյ հետ բարեկամական ու հաշտ յարաբերութիւնները: Իրենց այդ քայլը կը բղխի իրերու փիլիսոփայութենէն:

.

Սակայն պէտք չէ անհորիլ թէ ամեն բան վերջացած է Պարսկաստանի մէջ և թէ յետագիւտ ուժերը, սքած ու ջախջախուած, հեշտութիւնով պիտի համակերպին նոր ընթացիկ: Հին Շահը, ռուսական արծաթի թեւերուն սակ պիտի չզարդի դաւելէ: Կեղքիչ օւտղրուկ հաքիմները, աւատական իշխանները, որոնց ափին մէջ կեղծոնացած է երկրին ուժը և հարստութիւնը, պիտի չհանդուրժեն նոր կարգուսարքը որ կը

խլէ անոնցմէ մահուկեանքի իրաւունքը իրենց ստրուկ հպատակներուն վրայ: Նշանաւոր պարսիկ խան մը որ հերու Եւրոպա փախած էր, սա բնորոշ և շնական խոստովանութիւնը կընէր: «Մենք գիտենք որ իրաւացի են պարսիկ ժողովրդին գանգատները, սակայն մեր շահերուն հակառակ է որ ան ազատագրուի»:

Ներքին ընդհանուր պայմանները, յետագիւտական դաւերը, արտաքին քաղաքական ինտրիկները, բաւական զօրաւոր էութիւններ են վրդովելու համար Պարսկաստանի խաղաղ յառաջդիմութիւնը: Անձնէր ու կորովի ջանքեր հարկաւոր են ազատութեան բարեկամներուն կողմէն որ Իրանը դժբախտ պատահականութիւններու զոհ չերթայ: Պարսկաստանը թիւրքիոյ բաղադրամաբաւելի միատարր երկիր մըն է, հոն ցեղային և կրօններու բարդութիւնները գոյութիւն չունին կամ գրեթէ, որով ուժեղ և բարեխիղճ ազատական վարչութիւն մը ուղիղ գծով պիտի կրնայ առաջնորդել երկրի ղեկը, ստեղծել «քէթմանի» երկրին մէջ, քաղաքացիական հասուն հոգեբանութիւն մը, և տալ Պարսկաստանին քաղաքակրթութեան փայլը և դրոշմը: Պարսիկ ժողովրդի մտքի ճկունութիւնը, իդէալական ձգտումը, որ յաճախ յայտ եկած է պատմութեան ընթացքին մէջ, կը յուսադէ Իրանի բոլոր անկեղծ բարեկամները:

Ըսինք որ երկու իսլամ երկիրներու յեղափոխական ընթացքին մէջ շատ նմանութիւն կայ: Թողովրդական նոյն վառ ցոյցերը, համարները, անէճքի ու հայհոյանքի յորդահոսումները ու գրոհները արիւնարբու Շահին դէմ, որ «վատաբար» փախաւ ռուսաց ծոցը ապաստանեցաւ: Ազգային ժողովը Շահին գահընկէցութիւնը կը յայտարարէր Պոլսոյ Շէյխիսլամին ֆէթվային համեմատ ամբաստանագրով մը: «... Մէհմէտ Ալի Շահի թագաւորութիւնը երկրին համար շարունակական դժբախտութիւն մըն էր: Ան դրժեց գուրանի վրայ ըրած իր ներհական երդումները և կրօնի մեծ միւճթէհիաններուն կողմէ ազգուրաց յայտարարեցաւ: ան անգթօրէն իր հպատակներուն արիւնը մտաւ և գնաց օտար պետութեան մը պաշտպանութիւնը խնդրելու»:

Որպէսզի, երկու իսլամ երկիրներու ազատական շարժումները բոլորովին նմանէին, հայ արիւնին զոհաբերութիւնը ևս հարկաւոր էր Իրանի ատրուշանին վրայ — չէ՞ որ ըսուած է թէ հայ արիւնը «ամեն ազատութեանց արշալոյսի ցօղն է»: Հոն ևս յետագիւտութիւնը կամ Շահի վրէժխնդրութիւնը իրենց թոյնը թափեցին դժբախտ հայերու գլխուն: Պարսկաստանը ևս ունեցաւ իր ազատութեան վաղորդային իր Վիլիկիան: Աերջին հեռագիրները կը գուժեն որ ցեղապետ Ալի խան Բարատաղի մէջ 12 հայ գիւղեր քարուքանդ ըրած ու թալանած է 700 հայ ընտանիք ողբալի վիճակի մատնելով: Թէպիղի: հայոց առաջնորդը ռուսաց հիւպատոսին հաղորդած է այդ աւազակային արարքը: Գետագիւտութեան մէկ անարգ քայլը ընդունելով մէկտեղ այդ կոտորածը, չենք կրնար չհաւատալ նաև որ Ռուսաստանի անիծեալ ձեռքը գտնւի այդ ոճիրներուն մէջ, որպէսզի Պարսկաստանի գործերուն միջամտելու պատրուկ ստեղծէ և խառնակութիւն ձգէ ներքին գործերուն մէջ: Դժբախտ հայերը այդ պետութեան համար մահաւան խաղալիքներ են և զոր ան-

խնայօրէն կոտորել կուտայ երբ ուզէ: Իր երկրին մէջ կը հալածէ, դուրսը կը հալածէ և դեռ պատմական կուրուծիւնով մը կը միամտինք թէ Ռուսիա հայերու «աւանդական» պաշտպանն է:

Արպէսզի ռուսական նենգամտութիւնները մուտ չգործեն Պարսկաստանի մէջ, ազատական ըէժիմին պարտքն է օրինակելի դաս մը տալ այդ վայրերի և անուղղայ լեռնականներուն, որոնք դարերէ ի վեր սարսափը եղած են խաղաղ բնակչութեանց: Պարսկաստանը ցարդ մաքուր մնաց անմեղ արիւններ թափելէ, ուստի թող չպէտք է տալ որ՝ ճիշտ այն ատեն՝ երբ արգարութիւնը ազատութեան հետ ներս կը մտնէր Թէհրանի դարպասներէն, բարբարոս ցեղեր ամօթի արատը նետեն Ազատութեան պատմութեան վրայ: Հայ տարրը իր էն սրտագին ու խորունկ զգացումի գործնական բաժինը բերաւ Իրանի ազատագրութեան պատմութեանը և մենք կսպասենք որ այդ տարրը վայելէ նաև արգարութիւնը և ցոյց տայ որ, ինչպէս կուզէ, նոյնպէս խաղաղ աշխատութեան ատեն գիտէ և պատրաստ է ծառայել ընդհանուր հայրենիքի բարօրութեան ու մեծութեան: Մենք վստահ ենք որ Իրանի ժողովուրդը նոյնքան պիտի ցաւակցի և պիտի ջանայ դարմանել այդ վշտալի և ոճրային աղէտը, որովհետև հայ ժողովուրդը Պարսկաստանի մէջ, ինչպէս այլուր, շէնցնող և գերազանցապէս առաջադիմութեան անհրաժեշտ ստատը մըն է:

* *

Պարսկաստանի Յեղափոխութեան և Վահմանագրութեան ծագումը երեք տարւայ գոյութիւն հագլիւ ունին: Ամփոփելը հոս գլխաւոր փուլերը այդ ազատագրական շարժման, ուր պարսիկ ժողովուրդը հոյակապ խոյանքներ ունեցաւ Շահի դէմ, մղած իր պայքարին մէջ:

1906 յուլիսին ժողովուրդը Այն-էր-Տօվլէի բռնութիւններուն և եղած հարստահարութիւններուն դէմ բողոքելու համար, տասնեակ հազար հոգով Անգլիոյ դեսպանատունը կապաստանի և կը պահանջէ վեցերին պաշտօնանկութիւնը և «արգարութիւն»:

Այս անսպասելի դիմադրութիւնէն օգտուելով, սահմանադրական ըէժիմի կուսակիցները կը մտնեն բողոքողներու շարքերուն մէջ և սահմանադրական պրօպագանդ կընեն: «Արգարութեան» պահանջը «սահմանագրութեան» պահանջի կը փոխուի:

1906 օգ. 5 Մուղաֆէր Էդդին Շահը հրովարտակով խորհրդարան կը շնորհէ երկրին:

Հոկ. 7-ին Պարսկաստանի առաջին Ազգ. ժողովը հանդիսաւորապէս կը բացուի, և դեկ. 30-ին Շահը Մէճլիսի մշակած «բանուկի էսասի» կստորագրէ:

1907 յունւար 8-ին կը մեռնի Մուղաֆէր Էդդին և իր որդին Մէճմէտ Ալի Շահ թագ կը կապէ յունւար 19-ին:

Նոր Շահին և մէջլիսին մէջ կսկսին թշնամութիւնները: Մէճլիսին դէմ դաւադրութիւնները կը զօրանան: Յեղափոխական շարժումը կը կազմակերպուի կարգ մը մեծ քաղաքներուն մէջ: Քէրպէլայի մեծ կրօնապետները սահմանադրականներու ի նպաստ կը քարոզեն:

Շահը սարսափած ժողովրդական ահազին յուզումէն կը հրովարտակէ որ Պարսկաստանի միապետութիւնը սահմանադրական է:

Օգ. 30-ին Աթա պէկը աղամ կսպաննի յեղափոխականներէն իբր դաւաճան սահմանագրութեան:

Շահը իր մաքիավելական ոգուն համար հակակրելի կը դառնայ ժողովրդին:

Հոկ. 26 Ազգ. ժողովը կը կազմէ ազատական դահլիճ մը, զոր Շահը կստիպուի վաւերացնել:

Նոյ. 12-ին առաջին անգամը ըլլալով Շահը խորհրդարան կերթայ և իր հաւատարմութեան երդումը կը կրկնէ յայտնելով որ սահմանագրութիւնը «սուրբ հաստատութիւն» մըն է:

Շահին ու ազգին միջև սակայն յարաբերութիւնները երթալով կը լարուին:

Դեկ. 15-ին մէջլիսներուն մէջ և հրապարակով Շահը կամբաստանուի իբր դաւաճան և երդմնադրուծ:

Շահը ձերբակալել կուտայ Ազգ. ժողովի իրեն ղրկած պատգամաւորութիւնը և նստը էլ Միւլէ նախարարապետը, զոր հրաման կընէ սպաննել: Անգլիական դեսպանը կը փրկէ զինք և կը ձամբէ Եւրոպա:

Խորհրդարանի գոյութիւնը վտանգի մէջ է: Երկուստեք կը ղինուին Շահը ռուս խորհրդականներու ազդեցութեան տակ է: Ժողովուրդը ելքարացած ղինած կերթայ կը հսկէ խորհրդարանին շուրջը և մէճլիսը մնայուն նիստ կը յայտարարէ:

Շահը վախնալով որ գահընկէց կընեն զինքը կամ կսպաննեն՝ կընդունի Մէճլիսին պահանջները, ի միջի այլոց հեռացումը յետադիմական խորհրդականներուն: Շահը երդում կընէ նորէն անգլ. և ռուս դեսպաններուն սահմանագրութիւնը պահպանելու համար:

Պետական հարւածի այս անյաղող փորձէն յետոյ նենգամիտ Մէճմէտ Ալի Շահը կսկսի այս անգամ զօրացնել իր թիկնապահ գունդը և ազատականներուն դէմ կսկսի մութ ու դաւադրական յարձակումներ ու սպանութեան փորձեր: Ինչպէս փարսի հարուստ Ֆէրիդունի սպանումը, որովհետև օգնած էր ազատականներուն:

Աւերակոյթ անդորրութիւնը չկրնար խաբել հեռատես մտքերը: Մամուլը կսկսի ձայն բարձրացնել և ուղղակի յարձակել արքայատոհմին վրայ: Էնճուլէներու թիւը կը բազմապատկի և իրենց քաղաքական դերը կը զօրանայ:

1908 փետր. 28-ին Շահին վրայ երկու ռուս կը նետեն՝ երբ քաղաքի միջով կանցնէր: Հարւածը չյաջողիր և ժողովուրդը կափսոսայ փորձին վիժումը:

Յունիս 7-ին Շահը ձերբակալել կուտայ կարգ մը ականաւոր անձեր: Անգլիոյ և Ռուսիոյ դեսպաններուն մէջ կը տիրէ անհամաձայնութիւն: մէկը ժողովրդին իրաւունքները կը պաշտպանէ, միւսը Շահին:

Յունիս 22—23-ին զօրքը կը շրջապատէ մէճլիսի պալատը, ժողովրդին կողմէ ընդդիմութեան վրայ, կը ռմբակոծէ Պահարիստանը: Գնդապետ Ախիսով անձամբ կը հրամանատարէր այդ վայրագ գործողութեան: Յեղափոխականները արիութիւնով կը կուլին և ի վերջոյ տեղի կուտան: Ար ձերբակալուին կարևոր անձնաւորութիւններ: Շահը անգթօրէն խողխողել կուտայ անոնցմէ շատեր, և լաւագոյն դէմքերը:

Գաւաճան ու եղեռնագործ Շահը այդ անորակելի ոճիրը գործելէ յետոյ ազգային ներկայացուցիչներու դէմ, երջանիկ կը յայտարարէր՝ ինքզինք որ երկիրը

ազատած էր «կեանքներու պատուհասէն», այսինքն Մահամարութենէն, և կը կարծէր որ վերջնապէս ջանջախած էր յեղափոխական շարժումը, միւս կողմէ անպատկառ ստուգութիւնով մը կը յայտարարէր երկու դեպքաններուն, որ ինք սահմանադրութեան դէմ ոչինչ չունի, այլ թէ էնձուձենները միայն ուզած էր պատժել:

Թէ՛հրանի մէջ ուսական աջակցութիւնով ապրատամբութիւնը խնդրած էր և Շահը իր յետագէմ խորհրդականներով վարդի տերներու վրայ կերակրէին քնել, երբ պայթեցաւ Թէպրիզի ապստամբութիւնը: Շահը իր բոլոր ուժով անկարող եղաւ զսպել այդ հերոսական շարժումը, որ արձագանք գտաւ երկրին ամեն կողմը: Գժքախտաբար վերջնական յաղթութեան նախօրին, բազաբը ուսաներու թաթին տակ ինկաւ: Թէպրիզի կալանաւորումով կը կարծէր թէ Շահը դարձեալ յաղթանակ տարաւ, երբ հարաւէն պախտիարի լեռնականները, և հիւսիսէն ազգայնական գունդերը, որոնց մէջ և հայ խմբապետ մը և հայ կտրիճներ, ուղղակի արշաւեցին Թէ՛հրանի վրայ, թշնամին սրտէն զարնելու համար: Ռուսաց զօրքը էնզէլիի ճամբով, օտարները պաշտպանելու պատրուակին տակ, օդնութեան կը փութար Շահին, յեղափոխականներուն հետքին հետեւելով: Ատանգը մեծ էր յեղափոխականները շտապեցին և մայրաքաղաքէն դուրս Շահի առաջապահ բանակները ետ մղելէ յետոյ, յուլիս 13-ին մտան Թէ՛հրան, հոն ևս գրաւեցին խաղախանէն, զօրանոցը, ուր Ախաթով յուսահատական դիմագրութիւնը կը պատրաստէր: Ազատութեան բանակին յաղթական վազքին առջևէն սարսափահար Մէհմէտ Ալի արիւննեղակ Շահը Սուլթանապատի պալատէն ապստանեցաւ ուսաց դեպքանատունը և ցարին պաշտպանութիւնը խնդրեց: Ռուսներու միջամտութեան փորձը վիժեց և ուսաց բանակը կէս ճամբան բարացաւ մնաց:

Թէ՛հրանի ժողովուրդը գրկաբաց ընդունելով յաղթութեան բանակը չէր գիտեր ինչպէս յայտնէր իր ցնձութիւնը և երախտագիտութիւնը ազգային հերոսներուն, որ կուգային երկիրը փրկել հրէշներէն:

Յուլիս 14-ին, ճիշտ նոյն օրը, որ Ֆրանսիայի և ամբողջ աշխարհի ազատագրական պատմութեան դարագլուխը կը կազմէ, Թէ՛հրանի մէջ նախկին մէջլիսի և ծերակոյտի անդամները Ազգային ժողով կը գումարեն և գահընկէց կը յայտարարեն Մէհմէտ Ալի Շահը և տեղը կը կարգեն իր 12 տարեկան որդին սուլթան Ահմէտ-Միրզան, անոր խնամակալ նշանակելով Ազատիւլ-Միւլթ, քաճար ցեղի ազգեցիկ և ազատական իշխանը: Միփաստաբը, հիւսիսային բանակին հրամանատարը, պատերազմական նախարար կը կարգուի (սպասալար), Սարտար Ասատ պախտիարիներու հրամանատարը, ներքին գործոց նախարար, իսկ հայ խմբապետը Եփրեմ, որուն դերը շատ գերակշիռ եղած է յաղթութեան տեսակէտով, Թէ՛հրանի ոստիկանապետ կը նշանակուի, զոր Ռուսիա չուզեր ճանչնալ, իր սովորութեան համեմատ ստեղծով որ Եփրեմը հայ անիշխանական մըն է:

Ռուսիա և Անգլիա նօթայով մը իմացուցին որ պաշտօնապէս կը ճանչնան նոր Շահը և նոր ընտիրը: Ազգային ժողովը կը պահանջէ որ հին ոճրագործ Շահը օրսուաջ հեռանայ Պարսկաստանի հողէն, եւ որպէսզի յետագիւտական վտանգը ետ չդառնայ, ձեռ-

նարկեց մաքրագործումի, ինչպէս ըրին Թիւրքերը Պոլսոյ մէջ: Թէ՛հրանի մէջ կախաղան բարձրացան նախկին ընտիրին օրով պատուհաս ուժերէն, աշխարհականներ և մուլաներ: Էմիր Պահատուր բէկը, մեծագոյն հեղինակը Պարսկաստանի դժբախտութեան, ձեռք ինկած է հաւանական է, իր արժանա որ պատիժը ընդունի գողցած հարստութիւնները ազգին վերագարձելէ յետոյ:

Պարսկաստանի նոր ընտիրին բոլոր մարդիկը պարագրուները կարելի է ըսել ազատամիտ ուժեր են, սիրահար եւրոպական բազաբակրթութեան: Հին գլուխներ, ինչպէս ըրին Թիւրքերոյ մէջ, հաւանօրէն մեծ գեր չկրնան խաղալ հոն և բռնաբարել սահմանադրութեան ոգին:

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ր Ն

Ժ Ա Ս Ա Ն Ա Կ Ա Կ Ի Յ Կ Ն Ճ Ի Ռ Ն Ե ր

II

Գ Ա Ղ Ա Փ Ա Ր Ը Ե Ւ Ն Ր Ա Մ Ր Տ Ա Յ Ա Յ Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ր Ը

Ոչ ապագայական ցնորքները (anationalisme) չեն կարող արմատ բռնել մարդկային զանգուածների մէջ, նրանք չեն կարող դառնալ ուրայն դաւանանք, ու աշխարհահայեացք: Մտաւում է Հերովէն, ժխտելով ազգի ու հայրենիքի դաղափարը, հռչակելով հայրենասիրութիւնը, որպէս բուրժուական մի յղացում, սին ու դատարկ նախապաշարմունք: Մտաւում էին մաքրսիզմի հայրերը անցեալ դարու բաւանական թւականներին, երբ նրանք Փետրուարեան Յեղափոխութեան դուրսուտների մէջ, դուշախում էին ազգերի ժողովուրդ չբացումը համաշխարհային իմաստաբեմից, երբ նրանք վերածում էին ազգայնական բովանդակ իդէօլոգիան, դաղափարաբանութիւնը, տնտեսական գործօններին, չոր ու կոպիտ: Նիւթապաշտական մտահոգութիւններին, երբ նրանք — կեանքի բոլոր նշովեալ կնճիռները վեբրացին էլ ու փաբարակցիցիայի ենթարկելով — յայտարարում էին, թէ «աշխատաւոր ժողովուրդը հայրենիք չունի», «ուր կալ շահայնտեղ և նրա հայրենիքը»...

Մտաւում են բոլոր պրօֆէսիօնալ «աւարարները», բուրժուա, պանտալփնատ, պանիւլամիատ, պանդերմսնիստ ազգայնամուլ ռահվերաները, որոնք առ ոչինչ են համարում մանր, հպատակ՝ ազգութիւնների ինքնուրոյնութեան բողբոջները և ձգտում են լուծել բոլոր ազգայնական տարբերութիւնները միևնոյն տիրապետող ցեղային զանգուածի մէջ:

Մտաւում է, մասնաւորապէս, օսմանեան նացիօնալիզմը, սխալում են «Միլէթի Հաքիմի»՝ մոլեռանդները, որոնք ուզում են յետ շուտ տալ ազգերի պատմութեան անիւր և ներքին բազաբակրթութեան բազմակնճիռ խնդիրներում — դպրոցական, հոգեոր-կուլտուրական — ուզում են վերածել «չ-թիւրք ազգերը սոսկ կրօնական համայնքներ (ճրի-դորեան», «ուղղափառ» և այլն) և ճանաչել ամենուրեք մէկ ազգ մի աշխարհում) — տաճկութիւնը — մուսուլմանով, որ հինց

*) Նիստ բնորո է այդ տեսակէտից Ֆերիդ-փաւայալիան կարապարտեան մեակած ու առաջադրած ը կ եր ա կ ց ու ը ի լ ճ ճ ճ թ ի օրինագծի հոչակաւոր 4-րդ յօդուածը: Նա քիսայրուս է արգելիլ այլ եւ այլ ազգերի — հայ, բուլգար, լիւի, արաբ, արաբ եւ այլն — կաղանկան ընկերակցութիւնները, կօմիտները: Նա քիսայրուս է այլ յամուռ ու յօդուած: «Սմանեան միութեան», որ մակերեսային ու շօվիսիս պօլիտիկոսները հասկանում են ի բ ե կ ց մեթոլ, ձ ու լ մ ա ն մեթոլ: Եւ այդ սխուր յօդուածի պաշտպան կարապարտեանը յիշատակում է Ֆրանսիայի օրինակը... որ պարզ ապացոյց է, թէ ինչպէս օսմանեան դեռարձուիլի նացիօնալիզմը ձգտում է, յիշուի, հուսանարացին, զնգել — ազգայնական ու ցեղական սարբերութիւնները եւ սեղծագործել Տակիսանից մի նոր նրանսիա... «Ձուլարու» կայա-

ինքը, այդ «Միլլէթի Հաքիմէն», ինքը իշխող զանգաճը, սոսկ կրօնական մի համայնք է par excellence, որ դեռ նոր է սոր դնում համաշխարհային քաղաքակրթական ընկերակցութեան շէնքի վրայ, որ դեռ նոր է սկսում ունենալ իր պատմութիւնն ու կուլտուրան — ամենամաք խորիսը ազգայնութեան գաղափարի...

Տաճկաստանը «ազգային պետութիւն» չէ (Nationalstaat), այլ «ազգերի պետութիւն» (Nationalitätenstaat). նա պատկանում է աւստրիական ու ռուսական տիպին, ոչ ֆրանսիականին, իտալականին: Օսմանցի՝ սատրապէն, անապարակայ, կը շողկապէ տարբեր ազգերը միեւնոյն ընդհանուր պետականութեան գրոշակի տակ, իբրև միեւնոյն օձակի անդամներ, բայց այդ անունը երբէք չի ջնջի տարբեր, ուրոյն ազգութիւնների գոյութիւնը... որովհետև նրանք մի մի ինքնատիպ անձնաւորութիւններ են, մի մի պատմական միութիւններ, որբնադրւած ու անարձգելի զարբեր մըրկոտ փորձութիւններով Այդ փորձութիւնների մէջ միմիայն նիւթական, տնտեսական շահերը չեն գործակցել այլ և գաղափարական, հոգեբանական խորունկ պատճառներ...

Երբ մի գաղափար, մի իրողութիւն — որպիսին է «ազգ», «հայրենիք» — ստանում է նոյնիսկ արդի միջազգայնական հասանքների մէջ, առաջնակարգ կարեւորութիւն, երբ նա յայտնուում է, որպէս մէկը ժամանակակից հասարակական ամենաբարձր և ամենածանրակշիռ երևոյթներից, որ բարբառում է անվերջ ու կատաղի բանակիւններ աշխարհի բոլոր ծայրերում, հարկ է հետազոտել նրա պատճառները, ուսումնասիրել երևոյթը իր ծագման ու զարգացման մէջ դէմ աջափ, որչափ հնարաւոր է այդ հասարակական գիտութեան այժմեան վիճակում:

Հասարակական գիտութիւնը այնքան էլ հարուստ չէ «ազգային հարցի» ուսումնասիրութիւններով: Մասնաւորապէս, սօցիալական միջազգային գրականութիւնը — որից գլխաւորապէս պէտք է սպասել հասարակական բոլոր կրօնների արդար ու բանաւոր լուծումները — դեռ չափազանց աղքատ է այդ հարցի նկատմամբ: Ինչ վերաբերում է մեր հայկական գրականութեանը, — այնտեղ գրեթէ բոլորովին բացակայում են շատ թէ քիչ տեւական արժէք ունեցող թէօրական ուսումնասիրութիւններ և «ազգ» ու «հայրենիք» բառերը հանդիպում ենք միայն բանաստեղծների ու հոգեբանների քննադատական մարդանշանների մէջ:

Ինչու են ուղղերը այնքան մոլեգնուտ նախանձախնդրութեամբ հաստատապնդում, իրենց գիրքը երկրագնդի վրայ և ինչու են անպակաս էլ չէ, որ նրանք իջնեն պատմութեան բեմից:

Որտեղից է գալիս ինքը ազգայնութեան գաղափարը և ինչպէս է բնորոշում նրա իմաստը, էութիւնը:

Միջազգային սօցիալիզմի գիտնական բազմազանները սովորաբար ծանրանում են նորագոյն ազգութիւնների՝ վրայ կապելով նրանց ծագումն ու զարգացումը նորագոյն արդիւնադրութեան, կապիտալիզմի դարաշրջանի հետ:

Բայց կան հին, կլասիկ ազգութիւնները, որոնցով քչերն են զբաղւում... Գուցէ այն պատճառով, որ նրանց արմատները խորասուզւած են դարերի անթափանցիկ գիշերի մէջ Պէտք է զինել գիտական մեթոդի հզօր ջանքով, մտնել ոչ միայն պատմութեան, հնագրեան շրջանները, այլ իջնել նոյնիսկ նախպատմութեան անյիշատակ անցեալի մէջ և ճանապարհ բաց անել խորակրթութեան կուսակցութեան հիպոթեզների, հաւանական թեթաւորութիւնների վրայ յենելով... Ահա թէ ինչու դժարին է այդ կարգի հետազոտող պարսկաւորութիւնը:

Կան, այնուամենայնիւ, որոշ խորիսներ, որոնց վրայ գիտութիւնը կարող է բարձրացնել ազգայնական ուսումնասիրութիւնների՝ անհրաժեշտ ու թանկագին չենքը: Կան

բականոյթիւնը այդտեղ անտուր կոպտութեամբ մտնում է ներքին իր էութիւնը եւ իրական բացակայում էր պարլամենտում յոյն պատգամաւոր Կոզմիսի: Օսմանեան Միւրաթիւն անտիպ, եթէ կը հասկանա՞նք, ի՞նչ պէտք է նախ եկեղեցիները, քոյ բոլոր երթան մզկիթ...»

գործեր էտնօգրութիւնների (ցեղագրող), հասարակագէտների ու փիլիսոփաների, որոնցից կարող ենք քաղել որոշ փաստեր ու տեսութիւններ — հարկաւ, երբեմն, սուբեկտիւ, ենթակայական — որ անհրաժեշտ է ենթարկել բուն օբեկտիւ տեսարկայական մեթոդի վերլուծումին:

Առաջ գալով անասնութիւնից, որպէս ներկայ բարձրագոյն հանդրեանը կենդանական անհատնում է օրիւնցիայի մարդկային տեսակը բաժանել ու տարածել է երկրագնդի վրայ անհամար ճիւղաւորութիւններով: Ծնւած լինելով մեկնոյն արմատից, սնւած լինելով բիօլոգիական նոյն անպատ ազբերից, կապւած լինելով — ակներև, անփխտելի կապերով — անասնական բարձրագոյն տեսակի հետ՝ այդ բնութեանը մանր ու խոշոր մարդկային համախմբումները, բնականաբար, մատնում են որոշ ազգակցութիւն, որոշ փոխադարձ նմանութիւններ: Բայց և իւրաքանչիւրը այդ բնահասարակական ընկերակցութիւններից պահպանում է, իր ուրոյն միջավայրում, իր բնորոշ ու տարամբժ գծերը, որ չենք տեսնում միւսների մէջ, իւրաքանչիւրը պահպանում է մտածելու և զգալու, կամենալու և գործելու իր առանձնայատուկ եղանակը:

Այդ վերջինը կազմում է իւրաքանչիւրի ազգային բնութիւնը, ազգայնութիւնը: Այդ նման գծերը ստեղծում են ազգայնութեան հիմնաքարը, նրանց ամուր խորիսի վրայ կառուցւում են հայրենիքի բնութիւնը: Այդ և հայրենիք գաղափարները — թէև երկրորդը գործածւում է երբեմն սոսկ աշխարհագրական արտայայտութեան իմաստով — ընդունւած են ի սկզբանէ, իբրև նոյնիմաստ գաղափարներ, երկուսն էլ իբրև հասարակական հոգեբանական իրողութիւններ:

Ազգային ոգի, բնոյթ՝ ասելով չը բացատրեցինք երևոյթը: Ի՞նչ է այդ ոգին, այդ բնոյթը, ի՞նչն է, որ ազգային կատեգորիաների շարքն է դառնում այս ու այն մարդկային համախմբումը, ի՞նչն է, որ պատմութեան բոլոր շրջաններում առաջ է բերել անձնուրացութեան ու հերոսութեան այնքան տիպարներ, ստեղծագործել է գաղափարական այլափոխութեան այնքան հոյակապ կոթողներ... Այդտեղ է մեծ Անյայտը: Գաղափարի էութիւնը խուսափում է մեզնից, նա չի ենթարկւում ճշգրիտ բնորոշման, «ազգային ընկերակցութեան» բուն խորիսը մտնում է գաղափարի — խորհրդաւոր, միտիքական Այդ անորոշութեան ու խորհրդաւորութեան մէջ է հէնց գաղափարի ուժը և նրա ահագին հրապուրը... Բուռն, յորձանուտ զգացումները, հոգեբանական հզօր ու տիրական կատեգորիաները սովորաբար դժուար են որոշում և ստանում են անքննելի առեղծուածների կերպարանք: Մենք կը փորձենք, սակայն, մտնել ազգային գաղափարի ներքին էութեան, լուսաւորել նրա մի քանի խորները: Առ այժմ նկատենք, որ բոլոր դարաշրջաններում, քաղաքակրթութեան առաջանք մտած բոլոր մարդկային համախմբումների մէջ, այդ առեղծուածը ունեցել է միշտ նման հմայք ու ազդեցութիւն, յարուցել է միշտ նման յոյզեր, խանդավառութեան ու արթունքի նման թուրքներ:

Առանց կարենալու իրենք իրենց պարզ հաշիւ տալու ազգայնական ու հայրենակցական գաղափարի ներքին ճշգրիտ էութեան մասին, մարդկային այլազան ընկերակցութիւնները պարել զբացել են այդ մեծ իրողութեան թովղն ու ուժը: Բոլորն էլ երկիւղածութեամբ ծուռն են դրել այդ մտտիքական էութեան առջև, բոլորն էլ գուտ կրօնական բարեպաշտութեամբ զսհաբերել են նրա խորանին...

Գարեբը յաջորդել են իրար, գաղափարի ձևերն են փոխւել — էութիւնը մնացել է նոյնը: Ազգայնական սպիրիտուալիզմը, այն հզօր ու գերող պաշտամունքը, որ մղել է միշտ դէպի անարար այլափոխութիւն ու զստութիւն, առելի թոյլ չէ ժամանակակից հայ ու լեհացի, չեն ու իրանդայի հայրենասերների գիտակցութեան մէջ, բուն հնարարեան Յունաստանում, այն հին փոքրիկ ցեղների, կուլտուրական գերբնաստանների մէջ, ուր դրել են ժամանակակից հասարակարգի սպիտակը:

Արևուտերական գերդաստաններ... Արդարև, նրանց գոյութիւնը միշտ անխելի կապած է եղել բուն ազգային, դասակարգի, բուն, ճշմարիտ հայրենիքի վթիթման հետ:

Քարբարոսութիւնը ազգ չի ճանաչում, ոչ էլ հայրենիք: Նրա յորձանքի մէջ ցամաքում են ազգայնական ծաղիկի բողբոջները: Ազգ ու ազատութիւն—որոշ չափով ազատութիւն ու արդարութիւն, որոշ չափով կուլտուրա, քաղաքակրթութիւն—անհրաժեշտօրէն կցորդւած են իրար: Ահա թէ—ինչու արևելեան—օսմանեան ու այլ բազմադարեայ բունակալութեան հորիզոններում, տիրող արարի յեղադրական սահմանների մէջ չենք գտնում «ազգ» ու «հայրենիք» հասկացողութիւնները: ոչ «մլլեթը», ոչ «վաթանը» չեն թարգմանում նրանց իմաստը: Այս մի ուրիշ հասկացողութիւն, որ փոխարինում է նրանց, որ առիշխոյ է «ազգայնութեան», շարկապում է այլևայլ ցեղագրական միութիւնները. դա կը օ ն ն է...

Իսկ կրօնը մի իրողութիւն է, որ յատուկ է անգամ նախապատմական կենցաղով ապրող մարդկային համակարգում ներին, կրօնը մի իրողութիւն է, որ առաջ է եկել մարդկային ցեղի մանուկ հաստիւմ, իբրև ծնունդ՝ մի կողմից երկիւղի—երկիւղ բնութեան ահազեցիկ ուժերի հանդէպ—մի կողմից համատարած ու թանձրամած տղիտուութեան: Կրօնը ազգ չէ, ոչ էլ ազգային գոյութեան անհրաժեշտ ստորոգելի կրօնական համայնքը ազգայնութիւն չէ, բանի դեռ գեղերում է բարբարոսութեան մէջ. նրան պետք է զուգորդել, շողկալել, միանայ մի այլ գործօն, հակամարտ գործօն—ք ա դ ա ք ա կ ր թ ու թ ի ն ը, որ դալիս է աստիճանաբար կործանելու թէ տղիտուութեան ու նախապաշարունների մղձաւանջը և թէ բնութեան խորհրդաւոր տարբերների երկիւղը... Այն ժամանակ միայն հող է պատրաստում ա զ գ ա յ ն ու թ ե ա ն շէնքի համար:

Այդպէս է անօրինել Էւրօլեցիայի «նախնամութիւնը». նա կործեն չի կամեցել ազգ ու հայրենիք անունները դրոշմել մարդկային կուլտուրազուրկ հատուածների վրայ, այլ վերապահել է այդ անունները աւելի առաջադէմ համայնքներին, հասարակական զարգացման աւելի բարձր հանգրւաններին:

Եւ այդ բոլոր կուլտուրական համայնքների մէջ սերը դէպի հայրենիքը շեշտել է միշտ, որպէս գերագոյն առաքինութիւն, որպէս ամենանւիրականը պաշտամունքներից: Բ ա ու ը ինքն արդէն բնորոշ է զ գ ա ց ու մ ի համար: Այդ բառը—patrie, patria, Vaterland, Fatherland (հայրենիք)—առաջ է գալիս լատինական Pater-ից (Հայր), որ վկայում է մի մտերմական ը ն տ ա ն ի ք է, հօր ու դաւանների գոյութիւնը—մի բնասելիքի՝ որի անդամները կապած են համերաշխութեան ամենասերտ կապերով: Վոտուորապէս նոյն իմաստ ունի nation, Nazione (ազգ) բառը. որ նոյնութեամբ գոյութիւն ունի եւրոպական գրեթէ բոլոր ազգութիւնների բառաբերում և որ բխում է լատինական nascere-ից (ծնել): Հին ժամանակում գործածականը եղել է աւելի «հայրենիք» բառը: Եւ ամենուրեք նա նշանակել է գերդաստանի, անհատական բնասելիքի լայնացումը: Ուշագրաւ է, որ հայրենական բնասելիքի սերը յաճախ աւելի ուժեղ է եղել քաղաքացիների մէջ, քան սերը դէպի հարազատ, անհատական բնասելիքը, քանի որ վտանգի ժամին, երբ պետք է եղել պաշտպանել թշնամու հանդէպ հայրենի օժախն ու ստացւածքները,—մարդիկ զոհել են բնասելիքին: Չէ՛ կարող է իրայինների երջանկութիւնը:

Այդպէս է եղել անցեալում, այդպէս է և մեր օրերում. Գաղափարական ի ն ը ն ա ժ ի ս մ ա ն անհամար ու պատմական օրինակները մի մի պերճախօս հերքումներ են ժամանակակից ցիրուցան «ապագային» թէօրիաների...

Արդիտ, անուս «թէօրետիկներ» —մանաւանդ մեր հայաց կեանքում—փորձում են երգեմուպէս, մարքսիզմի, սխալ բժշկութեամբ սօցիալիզմի անունով, նսեմացնել այդ հզօր ու դարձաւոր իրէպիլոզմը, սկեպտիկութեան ու դուշմնակցական լիզմի սուտերը ձգելով նրա այլ և այլ դրաճիւնների վրայ: Ը ք փորձեցին նրանք հայ փողովրդի վերջին տասնեակ տարիների դիւցազնեղութիւնը, հայ երիտասարդութեան հայ-

րենասիրական թռիչքները բացատրել հայկական բուրժուազիայի «շուկային մտահոգութիւններով»...

Այն արևմտեան Եւրոպայում ևս մատերիալիզմի խիստ «հետևողական» դասվորները, որոնք տարիներով գլուխ են կատրում պատմութեան «յլ և այլ դրաճիւնների ուսումնասիրութեան վրայ», որպէսզի հաստատեն, թէ մարդկային հող ու բոլոր վնեմ թռիչքները, անհատների ու գանդածների դաղափարական բոլոր շարժումները—ազգային, կրօնական, հայրենասիրական և այլն—վերածուծ են վերջնականորէն ի լ թ ի ն, շ ա հ ի ն, անհատական ու դասակարգային էրօյիզմին: Այս և հոգեբանութեան մէջ մի թէօրիա—սակաւութիւ դաւանողներով—որ բովանդակ ալտրուիզմը, այլասիրութիւնը վերածուծ է էրօյիզմի, եսասիրութեան:

Պատմական իրականութիւնը ամբողջապէս չի համապատասխանում այդ թէօրիաների ցուցմունքներին: Նիւթական ու էրօիստական գործօնները, անշուշտ, մեծ տեղ են բռնում ընդհանրապէս թէ մասային և թէ անհատական հոգեբանութեան մէջ, բայց այդ վերջինը արտադրել է մերթ ընդ մերթ, անիշատակ ժամանակներից ի վեր այնպիսի խոյական թռիչքներ, որոնց հանդէպ հետևողական մատերիալիստը մնում է շճւած ու անօգնական, եթէ չի ուզում սիմպլիստ դօքտրինէօրութեան, գրչեւ քմահաճ ու բունաղբօսիկ շարժումներով դիւրին լուծում տալ բոլոր սանջող հանդոյներին...

Ինչպէ՞ս բացատրել նիւթական, էրօիստական դրուճներով հին քրիստոնեաների գանգաւային ու աղեխարշ նահատակութիւնը, այն դիւցազնական և խոյական վայրկեանները, երբ նրանք յօժարակամ ու անդիմադրելի սխանում էին դէպի ամենադաժան մահաւոր դիրքը, գնում էին վառւելու լապտերի տեղ ներօնական ապարանքներում, գնում էին դայարւելու կրկեսներում առիճների ու վաղրների ճանկերի մէջ, գնում էին... որպէսզի միայն հաւատարիմ մնան իրենց հաւատին, դաղափարին: Ինչպէ՞ս բացատրել պատճառներով միտոյիզմի, սակետական որոնումների, ճրգնաւորութեան ու ինքնաժխտման հսկայական հոսանքը, որ անցնում է կարմիր գծով միջնադարեան երկարածիք շրջանից... Արդեօք դաւոյց, անդրբերիմեան հատուցումը մտահոգութիւններով, յոյսերով... Բայց դա թոյլ անկոյուն պատճառաբանութիւն է: Աւելի ևս թոյլ ու անկոյուն է նման պարագաներում տնտեսական մատերիալիզմը, որ այդ խորհրդաւոր հոսանքները պարզելու համար կոչ է անում միայն ու միայն ժամանակի տնտեսական գործօնների խողերին:

Ահա և հայրենասիրականութեան դարձումը, արեւմտեաների էպոպիան, ալտրուիզմի ու առնական անձնուրացութեան ազդեցուցիչ թռիչքներով: Աչինչ աւելի սուրբ, աւելի վեհ ու նւիրական յոյսերի ու հոսանքների աչքում՝ քան ընդհանուր օժախի սերը և ոչինչ աւելի գորեղ ու անդիմադրելի քան այդ օժախի անունով գ ո ճ ա բ ե բ է յ ու բազմանքը: Հապա այն քաղաքի սպարտուհիները, որոնք պատերազմի ժամանակ յորդորում էին իրենց հարազատներին. «գնա՛, դաւախ, և վերադարձի՛ր վահանով կամ վահանի վրայ, յաղթական կամ մեռած»... Հապա այն գարմանալի մայրերը, որոնք հայրենիքի պատերազմներում կորցնելով իրենց թանկագին հարազատներին, հպարտ, ուրախ շնորհաւորում էին փոխադարձաբար, մինչ ուրիշ մայրեր յուսահատ հեծկտում էին իրենց յաղթւած դաւաճների վերադարձը տեսնելով... Հապա հայրենասիրութեան դիւցազնների այդ անհատնում բոյլը—Սցեփօլոնների, Վինկելրիչների*): Գարբալդիները—որ ձգւում է հնազարեան

* Իսկին՝ դարեւ են անցել—էւ սակայն ազատ Շեյնցաբիայի հպարտ գաւակները չեն կարող մոռանալ իրենց Արցօլը: Վ. ի. Կ. Կ. Լ. ր. ի. ղ. ի. Ե. որ ազանագրական պայքարի մի մտայն ու երակի օրջանում. դոնից ինքիցինքն մելվետեան նորածնունդ հայրենիքի նստար, —գոնեց ռպովիկի կլասսիկ ու շնագ վետեմոտրեալ: Տեսնելով Չեխովիայի նակասմայրում որ զանիւն անսքիացիները մեղի են գցել իր հայրենակիցներին, կազմելով սրանց օուրջը գրականում ու կուռ օրբաներ, նս վնեց իր մահով նստապարհ բանալ ազանական բանակի նստար ի դիմեց իր հայրենակից. նելվետեմոտրեմ, որոնք սկսել էին արդէն լեւի:

խաւարակու ժամանակներից մինչև մեր օրերը, կազմելով համաշխարհային պատմութեան ամենապանծալի էջերը: Նրանց դէմքերն ու գործերը դեռ մի մի պայծառ փարոսներ են ժամանակակից դադափարատենչ մարդկութեան համար: Ի՞նչն է արդեօք ղեկավարել նրանց...

Անշուշտ, իւրաքանչիւր դադափարական ռասպիւրայ, իւրաքանչիւր մի անձնագոհ, մի ասիետ, մի ալտուրուս վերջի վերջը անուճ է այն, ինչ որ հաճելի է իր եսին, ինչ որ նրան բերում է ներքին բաւարարութիւն: Յանուն այդ ներքին բաւարարութեան նա կը մահացնէ նոյնիսկ իր ետը: Այդ մտքով և միայն այդ մտքով և էգօիզմը, ետասիրութիւնը կարելի է ընդունել, իբրև գերագոյն ղեկավար մարդկային բոլոր գործողութիւնների: Այդ մտքով և անաք հաշուում են ալտուրուսը, որպէս ծնունդ միակ հիմնական ու համայնապարփակ էգօիզմի: Բայց դա կամայական մի բաւարար է. «էգօիզմ» հասկացողութիւնը դաւնում է այդ պարագայում չափազանց աւաճական, նա ընդլայնում ու տարածում է իր բնական սահմաններից դուրս, նա մտնում է մի ուրիշ հասկացողութեան հասկացողութեան սահմանները: Արդարև, այդ տեսակ ինքնատիպ ուժն էր շատ աւելի արամբանական կը լինէր որակել ալտուրուսի ստ, քան էգօիզմի ստանդարտը: Երբ մարդ որդուն փրկելու համար մահանք ընկնում է նեղուճում և խեղդուճում երբ անվեհեր անցորդը, անակնկալ հրդեհի հանդէպ, սլանում է բոցերի մէջ այրող գոհերին ազատելու համար, երբ ռազմիկը, յանուն հայրենիքի կամ այլ վերացական մի դադափարի, յօժարակամ գրկում է մահը, դնում դէպի տանջանք ու կախողանք և էգօիստական քայլեր չեն դրանք, ոչ իսկ էգօ-ալտուրուսական, այլ դա բուն մարմնացած, անաղարտ ալտուրուսըն է, այլափրութիւնը:

Ասում են նաև, որ ալտուրուսը, հայրենասիրական անձնագրութիւնը, առաջ է դալիս սեփական կաշառի փորձութիւններից, որ մարդիկ նեղուճում են հերոսական արկածների մէջ մղւած իրենց անմիջական հարազատների քոյր ու մայրերի, հայր ու եղբայրների և անուղիցներից, ազգականներից, իրենց աչքերի առջև յաւիտենորէն կաղաքող դրամաներից ու սարսուղութեան օրը բաժինը կայ այդտեղ: Իրաւ է, անշուշտ, որ զարհուրանքի մերձակութիւնը և տառապանքի անձնական փորձը հզոր խթան է ալտուրուսական ինքնուշնչումն ու գործողութիւնների: Հայոց արիւնտ դիւցազներգութիւնը իր այլազան դրակներով ու հերոսներով քոյր այդ Հրայրներն ու ծիրայրները: Արաբներն ու Սերբները մի մի վիպեր են այդ իրողութեան: Սակայն հայոց հայրենիքի խորանին զհաբերուողները չեն եղել ամենքն էլ այդ վեճակում: Եղել են և Չարարեաններ ու Զօրեաններ, Մարտեաններ և Աետօներ և մի անվերջ բոլոր կովիտահայ, պարսկահայ, բուլղարահայ գործիչների, որոնք հեռու տառապանքի ու զուլումների կրկնից, չը ճաշակած ուղղակի կամ անուղղակի թիւրքահայ տանջանքները, ծանօթ նրանց միայն գրքերից, սլացել են դէպի «Երկիր» և թաղել են իրենց ծաղիկ կեանքերը անհամբուր ու արիւննազանդ, բայց և յաւատ նախկին, միատիրօրէն հրապուրիչ հողի տակ... Եւ Չարարեանները, Աուկունեաններն ու Մարտիկները նախապաշարած ուղեղներ չեն, ոչ էլ կոյր, կամազուրկ, աւտոմատ գործակալներ, այլ դադափարի զգաստ ու ողջիտ ռասպիւրաներ, որոնք լքում են համայնարանական նստարանը, որպէսզի երթան մահանք ընկնող ծնրադրելու հայրենիքի և բաւարարում իր կյանքի (վերացականին)...

Եսական չոր հաշիւը սոյն չունի այդտեղ կայտարերային, անհաշիւ, ինքնաբերական մղումն... Բնագրական հզոր ուժեր կան մարդկային բնութեան արդանդուճում, որ չեն ենթարկուճ պաղ ու հաշուող բանականութեան վերլուծումին: Ճշմարիտ

„Բարեկամներ, այսօր ես կը սուճ իմ կեանքի, որպէսզի դու՛ յարգանքի: Յանձնարարում եմ ձեզ՝ միայն իմ ընտանիքը... Այս ասելով, նետում է թեմառու բանակի կենտրոն, նեղուճ է օղբանքն զարմուկ, ընչասպառ գեթիւն է փուռում, սակայն բացւած գոմի անմիջապէս նետում են հայրենակիցները, զարդ են արտաբանութիւնը եւ սանձում լիակատար յարգանքն...

հայրենասիրութիւնը պատկանում է այդ բնագոյնների կատեգորիային: Յաճախ են համեմատել այդ զգացումը Լ. Բ. Օ. նա կան զգացումի հետ: Միտոսիցիզմը, աւելուճաճային խորհրդաւորութիւնը երկուսի մէջ էլ կայ: «Արօն» իր էութեամբ յաճախ է զուգորդել հայրենիքին, այդ վերջինը ուժեղացնելու, ամբողջելու նպատակով: Նախնիքների կամ մեռելների պաշտամունքը (Amenkult, Culte des morts) գրեթէ բոլոր ժողովուրդների մէջ անբաժան է հայրենիքի պաշտամունքից: Բայց... եթէ կրօնը իր հիմքերով յեղեղեղուկ է, անցողական, ուրականային, եթէ նա, իբրև երկիւղն ու ազիտութեան վրայ հիմնուած մի կառուցածք, վաղ թէ ուշ պիտի տայ բանականութեան յարանաճ հասանքի առջև, — հայրենիքը, ընդհակառակը, կապւած է իւրաքանչիւր բաղաճար սրտի խորունկ թելերի հետ և յարատե բնութիւնի, իբրև շոշափելի ու գերազանցապէս ռեալական մի իրողութիւն, որ կրում է թէ մտքի և թէ խղճի ներառող ծուճը: Աթէիստներ շատ կան աշխարհում, քաղաքակիրթ մարդկութեան մեծամասնութիւնը: Նսկ հայրենագրելի, ապահայրենիք (apatrriot) անհասանք — գրեթէ անգոյ, բնագոյնական մի երեւոյթ են: Ապատիւ ծուճութիւնը (atheisme) հնարաւոր է և բանաւոր, ապահայրենիք թիւնը (apatrriotisme, այսինքն անտարբերութիւնը հայրենիքի բարօրութեան վերաբերեալ խնդիրներում) — անհնարին է և դատապարտուած բոլոր ժամանակների բարոյագիտական բոլոր թէօրիաներից:

III

Այս — խորհրդաւորութիւն ու անորոշութիւն... Սրտի բուռն յարձանքները — անվերլուծելի ու անվերածելի Le coeur a ses raisons que la raison ne connaît pas... Սիրտը յաճախ իր փաստերն ունի, որ անձանօթ են բանականութեան: Պաղ ու հաշուող բանականութիւնը սովորաբար չի թելադրում մարդ-անհատին՝ զհաբերել ներկայ կեանքի վայելքները գալոց կեանքի յոյսերին: Պաղ վերլուծող բանականութեամբ սովորաբար չեն զոհուճ հեռաւոր սերունդների բարօրութեան իրեւոյթներն...

Գաղափարական անձնագրութեան անսպառ աղբիւրը այն բնածին ալտուրուսըն է, որ հողեկան գոյութեան երկու հզոր բնագոյններից մինն է, որ հանդիսանում է ոչ իբրև էգօիզմի ձևափոխութիւն, ոչ իբրև ծնունդ ետապաշտական մահահրդութիւնների, այլ իբրև ուրոյն, ինքնօրէն, աւտոնօմ մի դոյութիւն:

Արժէ փոքր ինչ կանգ առնել այդ նշանաւոր վեճի վրայ: Հասարակական գիտութիւնը, ինչպէս և բնական գիտութիւնները տակաւին վեճում են այսպէս կոչւած «Ծագումների» շուրջը (Les Origines): Ինչպէս է առաջացել օրինակ «պարտքի» հասկացողութիւնը մարդկային հասարակութիւնների մէջ, ինչպէս են ծագել արդարութեան, «համբարախութեան», «գործակցութեան» դադափարները, որոնց արդիւնքն են ազգայնութիւնը, հայրենական կոչումը, որ այդ բոլոր գործունեների հիմնարկն է... Մենք արդէն յիշատակեցինք մի թէօրիա, որ առաջնութիւնը տալիս է էգօիզմին, որ հոշակում է եսական բնագոյնի իբրև ամենահզօրն ու տիրականը, իսկ միւս բնագոյններն իբրև նրա ձևափոխութիւններ, արգասիքներ: Այդ թէօրիայի համեմատ ուտիլիտարիզմը, օգտապաշտութիւնը մղելն է ալտուրուսական բոլոր գործերի:

Այս միւս թէօրիան, որ համարում է ալտուրուսըն նոյնքան հզօր ու հիմնական մի բնագոյն որքան նրա հակոտնեան: Երկու հակոտնեանները հանդիսանում են, որպէս զուգործաց և համազօր գործունեք թէ անանական և թէ մարդկային աշխարհում, որպէս փոխարարճ լրացուցիչներ: Նրանք համապատասխանում են տիեզերական այն երկու հակակշիռ մղելներին — ճիւղում և թիւնում, զուգործութեան և զանոցութեան — որ մենք յիշեցինք նախորդ յօդուճում: Նրանք չեղուճ են կենդանական էւոլուցիայի բոլոր աստիճանների վրայ, անգամ ստորին, միաբնիկ մարմինների մէջ, անգամ պրոտոպլազմի, նախանիւթի պարզ միապարզ զանդուճի մէջ:

Նրանցից մէկը, եզօիզմը, համապատասխանում է ինքնպահպանութեան (instinct de conservation), միւսը, այլորուիզմը—սերման ու բեղմնաւորման բնազդին (instinct de reproduction): Ստորին, միաբջիջ մարմինը, արդարեւ, մի ձմեռը, մի ամառը—սերունդ ու բազմանում է: Բաժանւելով, կարողաւելալ, ի ն ք զ ի ն ք ը ժ խ տ ե լ ո Վ: Ե ս ը ոչնչանում է յօգուտ ոչ-եսի, յօգուտ ս ե ը ն դ ի: Ե ս ը շ ա ը ո լ լ յ ա կ ո լ լ մ է ս ե ը ն զ ի մ է ջ... Այդպէս չէ՞ միթէ և մարդկային ինքնաժխտման, այլասիրութեան, հայրենասիրութեան նշանաբանը... Մարդկային ցեղի բնածին ալտրուիզմը չի՞ գալիս արդեօք ժառանգականօրէն այդ հեռաւոր, միաբջիջ նախնիքներից...

Ուրեմն, կենդանական թագաւորութեան այդ ստորին սանդուղքի վրայ մենք արդէն տեսնում ենք հրաշալի բնազդը, որ թերեւս նախադրելին է ալտրուիստական բոլոր այլազան արտայայտութիւնների: Կենդանական աւելի բարձր սանդուղքների վրայ «սերման» այսպէս սասած ը ն տ ա ն ե կ ա ն բնազդի հետ երեւան է գալիս աւելի լայն, հ ա ն ա ը ա կ ա կ ա ն հ ա մ ե ը ա շ խ ո լ թ ե ա ն բնազդը: Ալտրուիզմը նւաճում է աւելի ընդարձակ հօրիզոններ: Ամեն ոք գիտէ, թէ ինչ հրաշագործ ուժ է դառնում այդ համերաշխութիւնը մեղունների, մրջնիկների, ջրշունների և այլ կենդանական տեսակների մէջ: Թէ այդ և թէ այլ կենդանիների շրջաններում—թռչունների, կաթնասունների, մանաւանդ բարձր կապկային տեսակների մէջ—բոլոր խուզարկու բնազդները մատնանշել են ճշմարիտ ալտրուիզմի, զոհողութեան, ինքնաժխտման անթիւ ու ապշեցուցիչ օրինակներ:

Այլասիրութեան ու հասարակական համերաշխութեան այդ մղումը անասունների և ստունների*) աշխարհում՝ զօրաւոր հակալիւն է եզօիստական այն աւելի բնազդի, որի անունն է «գ ո յ ո լ թ ե ա ն կ ո լ լ է»: Ալտրուիզմը յանգում է համերաշխութեան և գործակցութեան, եզօիզմը—հակամարտութեան և կռուի:

Մինչև վերջին ժամանակները՝ բնագիտութիւնն ու բնափիլիսոփայութիւնը, հրահանգւած դարւինականութեան հոյակապ թէօրիայից, ծանրանում էին միայն գ ո յ ո լ թ ե ա ն կ ո լ լ է ի վրայ և համարեա զանց էին առնում հ ա մ ե ը ա շ խ ո լ թ ե ա ն, փոխադարձ օգնութեան երևոյթը կենդանական տեսակների մէջ: Այսօր, սակայն, կեսերի, կրպօտիկների ու այլոց աշխատանքների շնորհիւ, բազմաթիւ փաստերով հաստատուած է, որ այդ փոխադարձ օգնութիւնը մի ոչ պակաս զօրաւոր գործօն է կենսաբանական էւօլյուցիայի մէջ, որ ապրում, յարատւում ու յարթանալու են հէնց այն հակները, որոնց մէջ ամենից շատ է գարդացած փոխադարձ սիրոյ, ալտրուիզմի, համերաշխութեան ու գործակցութեան այդ բնազդը: Այդպէս, օրինակ, մրջնիկային թագաւորութեան մէջ այն աստիճան շեշտուած է այդ փոխադարձ օգնութիւնն ու հասարակական համերաշխութիւնը, որ մի նշանաւոր բնազդաւ Արեւելից հնարաւոր է գտնում խօսել ոչ միայն մրջնիկների «հասարակութեան», այլ մինչև իսկ մրջնիկային «ազնութեան» մասին: Հոկայական մրջնիկանոցներ, հաստատուած տարբեր միջավայրերում, որոնց անդամների թիւը հասնում է տասնեակ ու հարիւրաւոր միլիոնների և որոնք կազմում են մի հոյակապ դերդաստան, կապւած շինարար աշխատանքի և համերաշխ ու սրտառուչ գործակցութեան բնազդով...

*) Անսարակոյ, համերաշխութիւնն ու գործակցութիւնը մարդկային աշխարհում բոլորովից այլ բնոյք ունին, քան կենդանականում: Մարդկային հասարակութիւնների մէջ—ինչպէս արդէն շեշտուած են անցնող յօդանուն—գործող ազգակներ, մ ա ը գ ի կ, օճսու են կախով ու գիտակցութեամբ եւ այդ իսկ պատճառով արանք հետզհետէ պիտի կարողանան յեղափոխել իրենց հակասագիրը, նազեցնել ասիականաբար գոյութեան կռուի արհաւիրքներ եւ զարկ տալ ստեղծագործող համերաշխութեան: Այն ինչ՝ կենդանիների մէջ կոյր բնազդն է սիրայեանը եւ արեւն էլ շեշտուած լինի փոխադարձ օգնութեան բնազդային գործօնը կենդանական որոշ տեսակների մէջ, նա չի կարող փոխդիմել բոլորակցել «բնական լինելութեան» ու սարսափելի, աւելի «գոյափառի» հակասագրականութիւնը:

«Մրջնիկային ազգութիւն»... Չը խնդանք գիտութեան սպասուողի սուած այդ «թօսի» տիտղոսի վրայ: Սօցիոլոգիան և բիոլոգիան, հասարակագիտութիւն և կենսաբանութիւն միշտ աւելի և աւելի մտենում են, ձեռք տալիս իրար, հաստատուած են անալոգիաներ, նմանութիւններ, հնչակուած են նման տերմիններ, անուններ... որովհետեւ իրօք մինք միւսի շարունակութիւնն է, մինք միւսի բնական զուակը, որովհետեւ մարդկային աշխարհի գրեթէ բոլոր հիմնական ու տիրապետող զբաղումների ու բնազդների արմատները՝ այսօր ստիպւած ենք որոնել անասնական տիեզերքում, կենդանիների խայտաբղետ, այլազան հասարակութիւնների մէջ...

Արդ, եթէ ընդունենք, որ ալտրուիզմը, փոխադարձ սիրոյ և համերաշխ գործակցութեան տարերային մղումը ինքնուրոյն մի գործօն է կենդանական աշխարհում, պիտի ընդունենք նմանապէս, որ այդ բնազդը ժառանգաբար անցել է և մարդկային հասարակութիւններին: Նա, յիշուելի, անցել է ժառանգաբար և մենք տեսնում ենք, որ անյիշատակ դարերից ի վեր մարդկային համախմբումների զարգացման մէջ, բազմապիւղութիւնների էւօլյուցիայի հոսանքում՝ կ ո լ լ է ի, հ ա կ ա մ ա ը ա ո լ լ է թ ե ա ն ն արհաւիրքի գործօնի հետ կողք կողքի, զուգընթացաբար շեշտուած է նոյն մարդկութեան բաժան-բաժան բեկորների մէջ՝ հ ա մ ե ը ա շ խ ո լ թ ե ա ն, գ ո յ ծ ա կ յ ո լ թ ե ա ն բնազդը, որ բղխում է հնաւանդ և բնական ալտրուիզմից:

Աւելի ևս: Մ ա ը գ ի կ ո լ լ է թ ե ա ն էւօլյուցիայի մէջ ալտրուիստական բնազդին վիճակուած է միշտ աւելի և աւելի շեշտուել, գորանալ ի վնաս իր հակամիային Արդարեւ, պատմութիւնը իր յաջորդական փուլերի մէջ ցայտուն կերպով հաստատում է այդ իրողութիւնը: Փոխադարձ օգնութիւնը մարդկանց միջև, յօժարակամ, ինքնայորդայ գործակցութիւնը (Coopération spontanée) — անգամ Սպեկների պէս բուրժուազական սօցիոլոգների վկայութեամբ—աճում է հետզհետէ տիեզերական գոյամարտի, ազգային ու դասակարգային կռիւների ժխտի միջեց... Չը նայեա՞ծ պարբերական պատերազմներին, չը նայեա՞ծ անյաղ, նւածողական ու յօշոտողական ախորժակներին, համերաշխութեան մեծ դադարաւոր յաղթականօրէն բաց է անում իր ճանապարհը դէպի լուսապայծառ ապագան... Միջին դարերը անհամեմատ բարձր են հնադարեան շրջանից՝ իրենց բովանդակ—թէկուղ և անարշիկ ու քաօսային—հասարակարգով, իսկ նորագոյն կապիտալիստական շրջանը—անգամ վարձու աշխատանքի և «յաւելեալ արժեքի» իր սխտեմով—անհոնապէս բարձր է միջնադարից... Աճում է կամաւոր գործակցութիւնը անհասնների ու հասարակութիւնների միջև, աճում է յ ա ը գ ա ն ը ը դ է պ ի մ ա ը գ ի կ ա յ ի ն ա ն ձ ն ա լ ո լ լ է թ ի լ լ ը ը, աճում է ալտրուիզմը, որ հետզհետէ պիտի դուրս մղէ բիրտ եզօիզմի և վայրագ ուժի տիրապետութիւնը, թողնելով նրանից միայն բնական ու օրինաւոր «եսի» պաշտամուտը, միայն արդարամիտ ու ինքնապաշտան ԵՂՕ-ի բնազդը...

Եթէ երկու հնչակաւոր հակոսանքները, եզօիզմ և ալտրուիզմ, անալ ընթանային նոյն թափով—պէտք էր յուսահատուել մարդկային ճակատագրից և յուստես փիլիսոփաների պէս ողբալ կեանքի, տիեզերքի ունայնութիւնը: Բայց էւօլյուցիայի շինարար գործողութեան ընթացքում, երկրորդ բնազդը իր ազգակից՝ համերաշխութեան հակամուկ դերակալում է հետզհետէ: տիեզերական բարօրութեան մեծ կշիռը աստիճանաբար նրա կողմն է թեքում...

Ալտրուիզմի այդ յարաձուռ սկզբունքի վրայ են հիմնուած և միջազգային սօցիալիզմի յոյսերը: Այդ յարապակի ու հետզհետէ գերակշռող գործօնն է, որ պիտի տանէ դէպի հակամարտ ազգութիւնների լիակատար իրաւահաւասարութիւնն ու եղբայրութիւնը, դէպի մեծ, համամարդկային ընտանիքը...

Ինչպէս է արդեօք սկզբնաւորուել այդ գործօնը՝ վաղեմի ժամանակներում, տոհմակից, ազգանման համայնքների մէջ: Այդ է որ կը տեսնենք յաջորդով: